Այս իրադրությունը մեծ շեղում է «Փոթորիկ»–ի համաչափությունից: Շեքսպիրի պիեսում Պրոսպերոյի գերիների մեծ մասն իրենց հասարակության համար բարոյազուրկ ղեկավարներ են, որոնց շտապ թողություն ու առաջնորդ է պետք: Անգամ դրական կերպարները ավելի լավն են դառնում: Իշխող քաղաքական ղեկավարների հեղաշրջումը ենթադրում է, որ պետք է փրկվի ու հեղաշրջվի ամբողջ հասարակութունը: Ի հակադրություն Ջոյի՝ ապաքինվողները բարոյազուրկ չեն. նրանք ավելի շատ բարոյազուրկ աշխարհի և այն կառավարող ճնշող իշխանությունների զոհերն են: Պիեսի կերպարները՝ փախչելով դաժան իրականությունից, մեկ առ մեկ հավաքվում են Ջոյի մոտ: Մինչդեռ Ջոն, մարդկանց վիճակը բարելավելու հույսից կառչած, վճռում է թույլ չտալ, որ աշխարհի բարոյազրկությունը առանց դիմադրության շարու նակվի:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Պրոսպերոյի կղզու նման, Նիքի խորտկարանը՝ Ջոյի առաքելության ժամադրավայրը, միկրոկոսմիկ խաղաղության ապաստան է, որտեղ մարդիկ հավաքվում են՝ խուսափելու փոթորկալից մակրոկոսմիկ աշխարհից: Դա խաղաղասեր ուտոպիա է, որտեղ ոչ ոք չի վիրավորվում, կողոպտվում կամ սպանվում:

Հ.Գ. Ցավոք Մուֆիդ Ֆ. Ալ-Աբդուլլան վերջին պահին ունեցավ անձնական խոչընդոտ և չկարողացավ մասնակել գիտաժողովին: Տպագրում ենք նրա սեղմագիրը՝ նկատի ունենալով նյութի հետաքրքրությունը հայության համար:

Pr. Paromita Chakravarti
Jadavpur University
India

BEYOND BOLLYWOOD: SHAKESPEARE IN BENGALI REGIONAL AND DIASPORIC CINEMA

The current popular and scholarly interest in Indian cinematic engagements with Shakespeare appears to focus, almost exclusively, on films made within the mainstream, commercial Bombay based Hindi film industry or "Bollywood". In the last decade, Vishal Bharadwaj's Maqbool and Omkara and Haider based on Hamlet have set a new trend of making big budget Shakespeare movies with star actors which have generated widespread audience interest as well as critical comment. However, this emphasis on Bollywood, enabled by its global reach and emerging brand value and money power, has also meant that it has become synonymous with all Indian cinema, even Indian culture. This has often led to a marginalization of other kinds of Shakespeare themed Indian cinema which includes both regional cinema in non–Hindi languages as well as diasporic and Anglophone films. While the second category of films have enjoyed a degree of global visibility, the first has received scant attention in international Shakespeare scholarship. With a view to focus on these less discussed kinds of Indian films with Shakespearean themes the proposed paper will examine how Indian regional cinema, particularly Bengali films and Anglophone and Bengali diasporic cinema negotiate the cultural legacy of Shakespeare in India.

One of the earliest Indian regions to have been exposed to British colonial education and Shakespeare, Bengal has had a long history of Shakespeare translations and adaptations. Calcutta, Bengal's capital and the erstwhile capital of the imperial government has also had a long tradition of multicultural Shakespearean theatre characterized by contributions of various communities including the Armenians. The proposed paper will explore how this cosmopolitan Shakespearean inheritance shapes the Bengali identity and becomes one of the central themes of selected Bengali language and Anglophone and Bengali diaspora films. Focusing on selected films representing the three above genres, the paper will explore the deployment of Shakespeare to portray the spirit of Calcutta and of Bengaliness poised between the west and the east, tradition and modernity, colonial and post–colonial legacies, enlightenment values and popular prejudices. The paper

will analyse the Bengali language films, Ajoy Kar's Saptapadi and Aparna Sen's Arshinagar [2014]; Anglophone films set in Calcutta, Aparna Sen's 36 Chowringhee Lane and Rituparno Ghosh's The Last Lear [2006] and the Bengali diasporic films set in London, Jon Sen's two-part television drama, Second Generation [2003] and Sangeeta Datta's Life Goes On [2009] to trace the changing fortunes of Calcutta, Bengalis and of Indian Shakespeare in non–Bollywood Indian cinema. Through this analysis the proposed paper will also critically examine the relationship of national, global and regional Indian cinema and the use of Shakespeare in the service of forging local identities within larger structures of multicultural exchanges.

Փարոմիթա Չաքրավարթի
Ջադավփուրի համալսարան
Հնդկաստան

ԲՈԼԻՎՈՒԴԻՑ ԴՈՒՐՍ՝ ՇԵՔՍՊԻՐԸ ԲԵՆԳԱԼԻ ԵՎ ՀՆԴԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՖԻԼՄԵՐՈՒՄ

Ներկայիս հանրային և գիտական հետաքրքրությունը Շեքսպիրի հնդկական կինեմատոգրաֆիա թափանցման հանդեպ, գրեթե ամբողջությամբ կենտրոնացած է մասսայական ֆիլմերի՝ Բոմբեյում հիմնված Հինդի կոմերցիոն կինոարդյունաբերության կամ էլ Բոլիվուդի վրա: Վերջին տասնամյակում Վիշալ Բարադվաջի՝ «Համլետ» ողբերգության վրա հիմնված «Մաքբուլը», ինչպես նաև «Օմքարա» և «Հայդեր» ֆիլմերը խթանեցին մի նոր տենդենց՝ մեծ բյուջեով և կինոաստղերով լի շեքսպիրյան ֆիլմերի նկարահանումը, որոնք մեծ հաջողություն ունեցան, ինչպես նաև արժանացան բարձր միջազգային քննադատական արձագանքների:

Սակայն Բոլիվուդի շեքսպիրյան թեմաներով ֆիլմերի աննախադեպ հաջողությունը հնարավոր եղավ Բոլիվուդի համաշխարհային ճանաչման, բրենդային արժեքի և ֆինանսական միջոցների շնորհիվ: Մինչդեռ նաև Բոլիվուդը նույնացվում էր ամբողջ հնդկական ֆիլմարվեստի և հնդկական մշակույթի հետ: Այս հանգամանքը պատճառ է եղել շեքսպիրյան թեմաներով այլ ֆիլմերի մեկուսացմանը, որոնց թվում նաև ոչ հինդի լեզուներով ֆիլմերը, ինչպես նաև հնդկական սփյուռքի և անգլալեզու ֆիլմերը:

Մինչ Բոլիվուդի ֆիլմերը հասել են որոշակի համաշխարհային հաջողության, մյուսն ֆիլմերը սահմանափակ ուշադրության են արժանացել համաշխարհային շեքսպիրագիտության կողմից:

Առաջարկվող աշխատությունը ուսումնասիրում է շեքսպիրյան թեմայով ավելի քիչ քննարկված հնդկական ֆիլմերը, թե ինչպես հնդկական ռեգիոնալ ֆիլմերը, հատկապես բենգալական և բենգալերեն ու սփյուռքի անգլալեզու ֆիլմերը, հիրավի նպաստել են շեքսպիրյան ժառանգության տարածմանը Հնդկաստանում:

Բենգալը Հնդկաստանի ամենաառաջին շրջաններից է, որ կրել է Բրիտանական գաղութային կրթության և մշակութային ազդեցությունը, ունեցել շեքսպիրյան թարգմանությունների և ադապտացիաների երկար պատմություն: Բենգալի մայրաքաղաք Կալկաթան և երբեմնի անգլիական գաղութատիրության մայրաքաղաքը, նույնպես ունեցել է շեքսպիրյան բազմամշակութային թատերական երկար ավանդույթ՝ տարբեր համայնքների աջակցությամբ, որոնցից մեկն էր նաև հայկական համայնքը տասնյոթերորդ դարից ի վեր:

Առաջարկվող աշխատությունը ուսումնասիրում է, թե ինչպես այս շեքսպիրյան կոսմոպոլիտ ժառանգությունը ձևավորել է բենգալական ինքնությունը և դարձել մի շարք բենագլերեն, անգլերեն և սփյուռքի բենգալական ֆիլմերի կարևոր թեմաներից մեկը: Կենտրոնանալով վերը նշված երեք ֆիլմերի ժանրերի վրա, այս աշխատությունը հետազոտում է Շեքսպիրի տեղայնացումը, բացահայտելով Կալկաթայի և «բենգալական» ոգին՝ արևմուտքի և արևելքի, ավանդույթի և արդիականության, գաղութային և հետգաղութային ժառանգության, քաղաքակիրթ արժեքների և հետամնաց նախապաշարումների միջև:

Աշխատությունը վերլուծում է Աջոյ Քարի «Սափթափադի» և Ափարնա Սենի «Արշինագար» (2014) բենգալերեն ֆիլմերը, Ափարնա Սենի «Չոուրինգի նրբանցք 36» և Րիթուփարնո Գոշի «Վերջին Լիրը» (2006) անգլալեզու ֆիլմերը, որոնց գործողությունները կատարվում են Կալկաթայում: Ջոն Սենի «Երկրորդ սերունդը» երկմաս հեռուստատեսային դրաման (2003) և Սանգիթա Դաթթայի «Կյանքը շարունակվում է» (2009) բենգալական սփյուռքի ֆիլմերը, որոնց գործողությունները կատարվում են Լոնդոնում՝ հետևելով Կալկաթայի և հնդկական ոչ բոլիվուդյան ֆիլմերում հնդկական Շեքսպիրի փոփոխվող ճակատագրերին:

Այս աշխատությունը նաև քննադատորեն ուսումնասիրում է կապը ազգային, գլոբալ և շրջանային հնդկական ֆիլմերի և ինքնահաստատման որոնումների միջև, ինչպես նաև Շեքսպիրի դերը համաշխարհային և ազգային մշակույթների փոխազդեցության մեջ:

Naira Shahvaladyan
State Museum for Art and Literature
Armenia

THE STAGE APPEARANCE OF SHAKESPEARE'S *HAMLET*

Shakespeare has carved a "powerful figure" from the legend of *Amlethus*, where, for centuries, different individuals with different nature and levels of perception, different artistic and moral–psychological objectives have existed and continue to exist. Hamlet's great mystery has been approached from psychological, linguistic, philosophical, ethical, judicial, psychiatric and other perspectives. Transgressing the boundaries of the tragedy, his image has entered the realm of "eternal characters". Hamlet is neither a type, nor a character, but an abstraction. Therefore, it is both an interesting and important question as to how Hamlet is supposed to look and how his features have been expressed for around 400 years. How does he appear in Shakespeare's textual material and how have actors and painters have perceived him? I have studied the pictures of famous actors from Shakespeare's time until today, including photos, sketches of costumes, artistic works, archives of European and Armenian actors. This research is an original inquiry, as so far I have not been able to find a similar examination of Hamlet's images.

Hamlet's stage appearance is examined considering several conditions: each artist, painter, writer or actor, always has a visual or reflective starting point, and since it is conceived by the author, there is no external object–form. The artist also has a real starting point—a detected archetype. The playwright adds a theatrical model—an acting archetype observed in life for these two starting points. Per author's text, his literary intonation, it is possible to see the face and the appearance of the character (his clothes or some parts of it). With time, the idea of this character has gained a new face, new posture and manner of speaking, new clothes have been designed for him, and even his fate has been changed. There have been romantic personifications, such as Byronic types, idealist or pessimist Hamlets and so on. This is not a role that can be epitomised. The text of Shakespeare's *Hamlet* is comprehensive (universal). The text does not dictate a type, but assumes different acting types. He has been represented as a poet, philosopher, prince, knight, soldier, high society salon type, university student, contemporary man. Types are diverse and different. The aim of this paper is to identify and to examine various types of stage representations throughout time.

Նաիրա Շահվալադյան
Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան
Հայաստան

ՇԵՔՍՊԻՐԻ ՀԱՄԼԵՏԻ ԲԵՄԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆԸ

Շեքսպիրը Ամլեդուսի առասպելից կերտել է «ճևային հզոր կարգ», որի մեջ դարեր շարունակ ապրել ու ապրում են տարբեր մարդիկ՝ ընկալողականության տարբեր բնույթով ու մակարդակով և գեղարվեստական ու բարոյահոգեբանական տարբեր նպատակներով: «Համլետը» դարձել է մեծ առեղծված, որին մոտեցել են հոգեբանական, լեզվաբանական, փիլիսոփայական, բարոյա-իրավական, հոգեբուժական և այլ տեսանկյուններից: Նրա կերպարանքը, դուրս գալով ողբերգության սահմաններից, մտել է «հավերժական կերպարների» սահմանները: Համլետը ո՛չ տիպ է, ո՛չ էլ բնավորություն, վերացարկում (տրանսցենզուս) է: Ուստի հետաքրքիր և կարևոր հարց է, թե ինչպիսին է ենթադրվում և ինչպես է դրսևորվել Համլետի արտաքին կերպարը շուրջ չորս հարյուր տարի: Ինչպե՞ս է երևում նա Շեքսպիրի խոսքային նյութի մեջ, և ինչպե՞ս են տեսել նրան դերասաններն ու նկարիչները: Ուսումնասիրվել է Շեքսպիրից մինչ մեր օրերը խաղացված հայտնի դերակատարումների լուսանկարները, հագուստի էսքիզները, գեղարվեստական գործերը, հայ դերասանների արխիվներն ու տպագիր նյութերը: Սա առանձնահատուկ հարցադրում է, որի հիմնավոր բացատրությանը չենք հանդիպել թատերագիտական գրականության մեջ:

Համլետի բեմական արտաքինը քննվել է՝ նկատի ունենալով մի քանի պայման. յուրաքանչյուր ստեղծագործող, լինի նկարիչ, գրող, թե դերասան, անպայման ունենում է պատկերային կամ մտահայեցողական ելակետ, որովհետև դա հեղինակի կողմից է մտածված, չկա որևէ արտաքին առարկայածև: Ստեղծագործողը ունենում է նաև ռեալ ելակետ՝ իրականության մեջ դիտարկված նախատիպ: Այս երկու ելակետերին դրամատուրգն ավելացնում է բեմական մոդելը՝ դերասանական նախատիպը: Ելնելով հեղինակի տեքստից, նրա գրական ինտոնացիայից՝ կարելի է տեսնել գործող անձի դեմքն ու կերպարանքը (հագուստը կամ դրա որոշ դետալներ): Ժամանակներն այդ հերոսի գաղափարին տվել են նոր դեմք, նոր կեցվածք ու խոսելու ձև, նոր հագուստ են կարել նրա համար, նույնիսկ ճակատագիրն է փոխվել: Համլետի տարաբնույթ և բազմաձև ապրումները մեծ էներգիա են պահանջում, և հնարավոր չէ այն ամենը, ինչ Համլետը իր մեջ կրում է, ներկայացնել բեմում: Եղել

են ռոմանտիկական կերպավորումներ՝ բայրոնյան տիպեր, իդեալիստ կամ հոռետես Համլետներ և այլն: Սա տիպականացվող դեր չէ:

Շեքսպիրի «Համլետի» տեքստն է համապարփակ (ունիվերսալ): Տեքստը տիպ չի թելադրում, բայց ենթադրում է դերասանական տարբեր տիպեր: Յուրաքանչյուր դերասան ինչ–որ տիպի մեջ է ներկայանում: Նրան տվել են պոետի կեցվածք, փիլիսոփայի, արքայազնի, ասպետա– զինվորական, սալոնային, համալսարանականի, ժամանակակից մարդու... Տիպերը բազմազան են և բազմաբնույթ: Այս զեկուցման նպատակն է փնտրել ընդհանուրը և օբեկտիվը:

Pr. Sona Seferian
Director of Shakespeare Center
Yerevan State University
Armenia
and
Jasmine Hasmik Seymour
Global Shakespeare
Queen Mary University of London
Great Britain

THE ROLE OF SHAKESPEAREAN TRANSLATIONS IN THE REVIVAL OF THE CULTURAL AND ARMENIAN NATIONAL IDENTITY (1820–1923)

The present paper examines the historical context of the Armenian translations from the beginning of the 1820s to the 1920s, as well as investigates why the history of the naturalization of Shakespeare has been so prolonged and geographically disjointed.

Almost two hundred years ago Armenian publishers in Calcutta began translating Shakespeare for educational and didactic purposes. Gradually, Shakespearean plays appeared in classical, Western and Eastern Armenian as well as local dialects across the Armenian Diaspora: Tiflis, Smyrna, Constantinople, Moscow, Paris, Vienna, Venice, London, Beirut and other cities. In Western Armenian, Shakespeare's plays were translated by progressive writers and publishers (for example, Mesrob Tagliadian or Aram Teteyan) to enlighten the nation, whereas in Eastern Armenian (for example, Gevork Chmshkian or Senekerim Artsruni), they were adapted mostly for theatre performances and largely contributed to the revival of the Armenian national theatre from the 1860s. Consequently, during the second half of the nineteenth century, like many countries across Europe, Shakespeare became the most venerated and translated writer among Armenians. It is a significant and welldocumented fact, often overlooked by international scholarship, that Armenians were the first to introduce Shakespeare across the Middle East and Caucasus, where they had established flourishing communities (including the Ottoman Empire, Persia Southern provinces of the Russian Empire including Georgia). The present paper examines some pioneering Shakespearean translations in various Armenian communities spread from East to West that contributed to the revival of the Armenian cultural and national identity grounded on the Western archetype.

Professor Sona Seferian's research Shakespeare in Armenian Translations 18501950 has been a major inspiration, therefore the present paper has considered her many observations and extensive findings. She has been a prominent figure of Armenian Shakespeare research of the post-communist era following the footsteps of academician Ruben Zarian, the founder of the Shakespeare centre and library in Yerevan in 1964. During the past two decades, professor Seferian has published books and papers on Shakespeare, organised several Shakespeare conferences and revived the Shakespeare centre at the department of English at Yerevan State University.

Սոնա Սեֆերյան
Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր
Հայաստան
և

Հասմիկ Սեյմոր
Գլոբալ Շեքսպիր
Լոնդոնի համալսարան, Քուին Մերի
Մեծ Բրիտանիա

ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԱՐԹՈՆՔԻ ՄԵՋ (1820–1923)

Այս զեկուցումը հակիրճ մեկնաբանում է Շեքսպիրի հայացման երկարատև և խրթին ճանապարհը՝ մինչև նրա լիակատար հայացումը 1920–ականներին՝ մասեհյանական թարգմանություններով: Թարգմանական առաջին փորձերը, որ արված էին բնագրից գրաբար, լույս տեսան Կալկաթայի հայ պարբերականներում՝ 1820 թվականներից սկսյալ՝ հայ երիտասարդությունը կրթելու և լուսավորելու միտումով: Այնուհետև Շեքսպիրի դրամաները թարգմանվել են գրաբար, արևմտահայերեն, արևելահայերեն և հնչել են տեղական բարբառներով: 1850–ականներից սկսած՝ շեքսպիրյան հայ թարգմանությունները հրատարակվել են աշխարհի չորս մասերում, ուր հաստատվել էր օտար զավթիչներից հալածված հայությունը՝ Զմյուռնիա, Պոլիս, Թիֆլիս, Վիեննա, Վենետիկ, Փարիզ, Մոսկվա, Լոնդոն և այլ գաղթօջախներ:

19–րդ դարի երկրորդ կեսին ինչպես Եվրոպայում, այնպես էլ հայ իրականության մեջ, Շեքսպիրը ամենաշատ թարգմանվող և առավելագույնս մեծարված հեղինակն էր: Զմյուռնիայում, օրինակ, Արամ Տետեյանի բնագրից կատարված արձակ թարգմանությունները ծառայում էին հայությունը անգլիական վերածննդի բարձր գաղափարներին ծանոթացնելու և հայության ճաշակը և աշխարհայացքը զարգացնելու նպատակին: Մինչդեռ այլ գաղութներում՝ Թիֆլիսում և Բաքվում, Շեքսպիրը թարգմանվում էր հայկական ազգային թատրոնի ստեղծման ու զարգացման նպատակով: Սակայն բոլոր հայ գաղթօջախներում, Շեքսպիրի թատերգությունների թարգմանությունները նպաստեցին ազգային մշակույթի աննախընթաց վերելքին, աշխարհաբար լեզվի զարգացմանը, ինչպես նաև ազգային ոգու վերածննդին: 19–րդ դարի այդ հոգևոր և մշակութային վերելքն էր, որ հայ մտավորականությանը և գործիչներին հույս և եռանդ էր ներշնչում հավատալու ազգային ինքնահաստատմանը և անկախ պետականության վերականգնմանը: Հայությունը Շեքսպիրյան անկրկնելի և բազմաշերտ կերպարների՝ Բռուտոսի, Անտոնիոսի, Համլետի, Օթելլոյի, Լիր Արքայի միջոցով արտահայտում էր իր սեփական հույզերը, տառապանքներն ու մաքառումները՝ հայ ժողովրդի պատմության բախտորոշ խաչմերուկներում:

Ներկայիս ուսումնասիրությունը ներշնչված է պրոֆեսոր Սոնա Սեֆերյանի «Շեքսպիրը հայ իրականության մեջ 1850–1950» ծավալուն աշխատությունից: 1990–ականներից ի վեր պրոֆեսոր Սեֆերյանը շարունակում է Շեքսպիրագիտության կենտրոնի աշխատանքները համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի Շեքսպիրյան կենտրոնում: Նաև ղեկավարել է Շեքսպիրյան թեմաներով մի շարք ուսումնասիրություններ, հրատարակել գիտական հոդվածներ և գրքեր, կազմակերպել Շեքսպիրյան գիտաժողովներ, դասավանդել և կրթել նոր սերնդի շեքսպիրագետներ:

Dr. Karo Vardanyan
Director of the State Museum for Literature and Arts
Armenia

SHAKESPEAREAN TRANSLATIONS BY DASHTENTS

In his translations, Khachik Dashtents (1910-1974) adopted the rules of the Armenian verse from his inspiring teacher, translator Hovhannes Massehian. Armenian translators, especially Shakespearean translators, are challenged by additional difficulties. English words and phrases can have several meanings, meanwhile they are 3 to 4 times shorter than Armenian words. This is the reason why every line in Dashtens translations is longer than in the original. It is apparent the tendency to make the original text more coherent for modern readers. It can be proved that Massehian's translations are targeted for more erudite and intellectual audiences, whereas Dashtents aimed to make Shakespeare's multifaceted meanings attainable for wider audiences. Shakespeare being actor himself, he wrote tragedies and comedies primarily for acting. Dashtens considered this decisive factor trying to make each drama suitable for stage presentation. Therefore, the translation of every single play took him over one year, continuously changing and improving the previous version. He attempted to give to the text a local, national meaning. In the process, Dashtents consulted numerous dictionaries, religious and other vocabularies, compared with Russian and other foreign translations. He was thrilled with the purchase of a rare nineteenth century English-Armenian dictionary edited by Lord Byron and Harutiun Avgerian in Venice that gave him an unprecedented insight to Shakespeare's vocabulary and language.

Dashtents always thought that he could never accomplish better results than his predecessor Massehian, and did not wish to translate the plays that Massehian had translated some fifty years ago. Dashtens was often criticised for lacking focus and being contradictory in his choices. On one hand, he was immersed in Shakespearean translations, on the other hand, he was writing patriotic novels about national self–determination and struggle for freedom. However, no critic could deny that his translations contributed vastly to Shakespeare's naturalisation in the Armenian language.

Shakespearean translations first appeared in the Armenian press at the beginning of the nineteenth century. Armenians were the first to introduce the Bard in the Middle East, and since then Shakespeare has always served

as a benchmark in the Armenian literature and wider culture. Our nation adopted Shakespeare as well as the names Hamlet, Ophelia, Laertes, Othello, and other Shakespearean heroes as its own.

Shakespearean translations by Dashtens attempted to remain close to the national and regional poetry. He spent over thirty–five years working on Shakespeare until the end of his life, translating nineteen plays in total. The final translation by Dashtentz happened to be *A Midsummer Night's Dream*, that has been regrettably lost without trace.

Կարո Վարդանյան
Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի փնօրեն
Հայաստան

ԴԱՇՏԵՆՑԻ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շեքսպիրյան թարգմանություններում Խաչիկ Դաշտենցն (1910–1974) իր ուսուցչից՝ Հովհաննես Մասեհյանից որդեգրեց հայկական թարգմանության ավանդական տաղաչափությունն ընդարձակելու սկզբունքը: Հայ թարգմանչի համար անգլիալեզու պոեզիայից թարգմանություններ կատարելը ընդհանրապես և Շեքսպիր թարգմանելը մասնավորապես կապված են լրացուցիչ բարդությունների հետ: Անգլերեն բառերն աչքի են ընկնում ոչ միայն իմաստների աներևակայելի բազմազանությամբ, այլև սեղմությամբ և կարճությամբ: Դրանք միջին հաշվով 3–4 անգամ ավելի կարճ են, քան հայերեն բառերը: Լեզվագիտական մանրակրկիտ հաշվումները ցույց են տվել, որ, եթե անգլերեն հազար բառից քառավանկ է ընդամենը 6–ը, գերմաներենից՝ 41–ը, ռուսերենից՝ 121–ը, ապա հայերեն հազար բառից քառավանկ են 366–ը: Սա է պատճառը, որ Դաշտենցը ևս Շեքսպիրի խոսքը դրել է առավել ընդարձակ տողերի մեջ:

Դաշտենցի թարգմանություններում նկատվում է Շեքսպիրյան անսանձ, հախուռն ու միմյանցից տարերայնորեն առաջ ընկնող պատկերները կանոնակարգելու, դրանք հնարավորինս դյուրին ու մատչելի ներկայացնելու միտում:

Կարելի է ասել, որ Մասեհյանի թարգմանությունները հասանելի են ավելի պատրաստված ու բազմակողմանի գիտելիքներով զինված լսարանի համար, իսկ Դաշտենցը նպատակ ունի շեքսպիրյան բազմախորհուրդ առեղծվածները ընթերցող ամենալայն շրջանների սեփականությունը դարձնելու: Շեքսպիրը դերասան էր և իր պիեսները գրել

է ոչ թե ընթերցանության, այլ բեմի համար: Դաշտենցը չի անտեսել այս հանգամանքը, ձգտել է տողերը կառուցել այնպես, որ դրանք արտահայտվեն սահուն ու անկաշկանդ, որ թարգմանությունը լինի հնչեղ ու բեմական: Այդպիսի արդյունքի հասնելու համար նա մեկ պիեսի վրա աշխատել է մեկ տարի, երբեմն մեկ տարուց էլ ավելի: Գործածած լեզվարտահայտչամիջոցների արտասանական ներգործությունը ստուգելու համար բազմիցս բարձրաձայն կարդացել է թարգմանությունները՝ բծախնդրորեն հետևելով յուրաքանչյուր տողին ու բառին՝ հաճախ ստիպված լինելով չգոհացնող դրվագներ ջնջել ու նորից թարգմանել: Ի տարբերություն Մասեհյանի՝ Դաշտենցը ձգտել է հայ ընթերցողի լեզվամտածողությանը խորթ որոշ ոճական ձևերի ու դարձվածքների համար համարժեքներ գտնել մեր լեզվի ժողովրդախոսակցական շտեմարանից, տեղայնացնել դրանք: Հատկապես մեծ բարդությունների հետ են կապված Շեքսպիրի պիեսներում մեծ թիվ կազմող միայն անգլերենին բնորոշ ոճերի, խրթին ու մանվածապատ փոխաբերական արտահայտությունների թարգմանությունները: Այդպիսիք թարգմանելու համար թարգմանիչը ստիպված է եղել օրեր ու շաբաթներ շարունակ թերթել կրոնական ու դիցաբանական տեղեկատուներ, բառարաններ, դիմել ռուս և օտար թարգմանիչների օգնությանը: Դաշտենցը հատուկ հպարտությամբ է խոսում իր ձեռքի տակ եղած անգլոհայ մի բառարանի մասին, որը կազմել են Հարություն Ավգերյանն ու Բայրոնը: Այդ բառարանը պարունակում է Շեքսպիրի ժամանակաշրջանի անգլերենի ողջ բառամթերքը՝ համապատասխան մեկնաբանություններով:

Մինչև 60–ական թվականները հայտնի էին մասեհյանական յոթ թարգմանություններ: Մահեսյանին հաջորդած թարգմանիչները միշտ շրջանցել են նրա թարգմանած պիեսները՝ գիտակցելով, որ անհնար է չափվել վարպետի հետ: Սովորաբար Դաշտենցի ստեղծագործությունը գնահատվում է որպես տարաբևեռ, թեմատիկ առումով ոչ համահավաք: Այս տպավորությունն առաջանում է նրա ստեղծագործության երկու հիմնական բևեռների՝ շեքսպիրյան թարգմանությունների և հայ ազատագրական շարժումների միջև թվացյալ հեռավորությունից: Սակայն Շեքսպիրից կատարած թարգմանությունները ևս դաշտենցյան թեմայի՝ հայրենապատումի անկապտելի մասն են կազմում:

Շեքսպիրը հայ իրականություն մուտք գործեց դեռևս անցյալ դարի սկզբներից: Հայերն առաջինն էին արևելքի ժողովուրդներից, որ հաղորդակից եղան Շեքսպիրի ստեղծագործությունների խորին խորհուրդներին, բռնվեցին դրանք մեկնելու ու տարածելու անդիմադրելի կրքով: Մեր ժողովուրդը անհունորեն սիրեց Շեքսպիրին և տեղ տվեց

համլետներին, օֆելյաներին, լեարտներին, մավրերին և շեքսպիրյան այլ ողբերգական հերոսների անունների: Մեր բեմերում Շեքսպիրի երկերի «հայկականացման» միտումն անցավ այնքան ակնհայտ, որ չի վրիպել նույնիսկ օտար հետազոտողների ուշադրությունից:

Ահա այս ավանդական–ազգային մոտեցումն էլ հենց Դաշտենցի համար ելակետ է եղել նրա թարգմանչա կան եր կարամյա աշխատանքների ընթացքում: Դաշտենցը իր շեքսպիրյան թարգմանությունների վրա աշխատեց շուրջ 35 տարի, մինչև կյանքի վերջը՝ սեփական ստեղծագործություններին զուգահեռ թարգմանելով 19 պիես: Վերջին թարգմանությունը «Միջամառային գիշերվա երազն» էր, որի ձեռագիրը ցավոք անհետ կորավ և մինչև օրս չի գտնվել:

Dr. Natalya Gonchar-Khanjyan
Yerevan State University

Наталия Гончар–Ханджян
Ереванский государственный университет
Армения

THE EARLY RUSSIAN TRANSLATIONS OF HAMLET (IN RUSSIAN)

О ПЕРВЫХ РУССКИХ ПЕРЕВОДАХ ТРАГЕДИИ ШЕКСПИРА «ГАМЛЕТ»

Впервые «Гамлет» пришел к русскому читателю и на русскую сцену во второй половине 18–го века – еще не в переводе как таковом, а в вольной переделке с французского, принадлежащей одному из крупнейших представителей русского классицизма, автору, в частности, целого ряда стихотворных трагедий А.В.Сумарокову.

В начале 19–го века в России, в образованной и, конкретно, в литературной среде Шекспира со все возрастающим интересом читают в оригинале и во французских переводах. Растет и становится все серьезнее и значительнее внимание к Шекспиру в литературной периодике. Соответственно, в культурной элите России все более ощущается необходимость и потребность в ознакомлении с творчеством английского гения широких слоев читателя, а это значит, что приходит время создания русских переводов с оригинала, верных ему, его содержанию, строю, форме. Выбор тех, кто берется за решение этой достаточно трудной творческой задачи, падает в первую очередь на уже овладевшую умами в России трагедию «Гамлет».

Значительным литературным событием становится издание в 1828 г. в С.–Петербурге первого перевода «Гамлета», созданного М.П.Вронченко. Военный геодезист, окончивший службу в чине генерал– майора, автор ряда географических сочинений, Вронченко принадлежал к сушествовавшей в России в 19–ом веке категории переводчиков, совмещавших со служебно–профессиональной деятельностью – как любимое, отвечающее их духовным запросам дело – увлеченную творческую работу в области литературного перевода. Как переводчик Вронченко руководствовался новаторским для его времени принципом максимального приближения к оригиналу. Его перевод «Гамлета» (а

также «Макбета») высоко оценила критика, в частности В.Белинский, в одной из своих статей о переводах «Гамлета» писавший: «… перевод «Гамлета» г.Вронченко отличается достоинствами великими: в нем веет дух Шекспира и передается верно глубокий смысл создания, а не буква». Спустя десять лет в другом переводе – Н.А.Полевого (крупный, многосторонний деятель русской литературы 1820–30–ых гг.) – «Гамлет» выходит на русскую театральную сцену, становится достоянием широкой публики. На это событие Белинский отзывается большой статьей, в которой подробно рассматривает и оценивает перевод Полевого, именно в связи с ним формулирует фундаментальные положения, которые лягут в основу развитой в дальнейшем теории реалистического художественного перевода, в целом оценивает этот «прекрасный, поэтический перевод», имевший «полный успех», утверждающий в России «славу имени Шекспира», как «великую заслугу и литературе, и сцене, и делу общественного образования».

Dr. Ruzanna Gargaloyan
Yerevan State University
Armenia

TRANSLATING PUNS IN *ROMEO AND JULIET*

For centuries pun has been considered an untranslatable stylistic phenomenon and translators have encountered much difficulties. One of the strategies they opted for was to include footnotes explaining the pun.

Some theorists suggest that pun is a shortened form of the Italian word "puntiglio" meaning "quibble", others suggest that it derives from the French word "pointe'" which can refer to a sharp comment or a joke. A pun is the use of a word in such a way as to suggest two or more meanings or different associations, or the use of two or more words of the same or nearly the same sound with different meaning to introduce a witty and humrous effect. There are three main groups of puns:

play upon words (homograph, homophone),
play upon phrases and their word components,
play upon grammatical and phonetic structure.

One of Shakespeare's most "punning" plays is *Romeo and Juliet*, with almost one hundred and seventy–five puns - in this paper only nineteen are examined. While puns are virtually untranslatable, yet some translators have succeeded to create equivalent puns in their mother tongue equivalent to the original. The first translation of *Romeo and Juliet* in prose was done in Smyrna (1866) by Aram Teteyan. In the translation of *Romeo and Juliet* (1896) by Hovhannes Massehian a skillful combination of literary and colloquial styles can be noticed in interpreting the puns. This paper will examine the variances in the translation of puns of five different versions of *Romeo and Juliet* accomplished between 1866 and 1975 in the Armenian language.

Dr. Vahe Arsenyan
Yerevan State University
Armenia

THE IDEA OF PHYSICAL LOVE IN D.H. LAWRENCE'S *LADY CHATTERLEY'S LOVER* AND W. SHAKESPEARE'S *ROMEO AND JULIET*

This paper will focus on the analysis of the novel *Lady Chatterley's Lover* written by English modernist D.H. Lawrence and one of the most famous tragedies, *Romeo and Juliet* by Shakespeare. To investigate the problem more thoroughly, the works of these two authors, who have literary similarities, have become the focus of comparative analysis.

The fundamental works by D.H. Lawrence *Psychoanalysis and the Unconscious* and *Fantasia of the Unconscious*, where the author speaks about his perception of human nature (the conscious and the unconscious) and touches upon the problem of the interrelation between man and woman, as well as the key terms such as "blood consciousness" and "mind–consciousness" are also included in the investigation. In the report, an attempt to view Shakespeare's play from a different angle is made – not as a romantic love story, the tragic end of which seems to strengthen the idea of the absolute love between the two heroes, but as a planned challenge, the main purpose of which is to praise the natural, physical love and to oppose it to the medieval stereotypes.

Վահե Արսենյան
Երևանի պետական համալսարան
Հայաստան

ՄԱՐՄՆԱԿԱՆ ՍԻՐՈ ԹԵՄԱՆ Դ.Հ. ԼՈՐԵՆՍԻ «ԼԵԴԻ ՉԱԹԲՐԼԻԻ ՍԻՐԵԿԱՆԸ» ԵՎ Վ. ՇԵՔՍՊԻՐԻ «ՌՈՄԵՈ ԵՎ ՋՈՒԼԻԵՏ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սույն զեկուցման մեջ հեղինակի քննության նյութ են դարձել անգլիացի մոդեռնիստ Դ. Հ. Լորենսի «Լեդի Չաթըրլիի սիրեկանը» և վերածննդի ժամանակների անգլիացի դրամատուրգ և բանաստեղծ Վիլյամ Շեքսպիրի ամենանշանավոր ստեղծագործություններից մեկը՝ «Ռոմեո և Ջուլիետ» պիեսը: Խնդրի էությունն առավել համապար-

փակ ուսումնասիրելու համար համեմատության առարկա են դարձել գրական–հոգեբանական առումով անչափ մոտ, սակայն ժամանակայնորեն իրարից բավական հեռու հեղինակների ստեղծագործությունները: Զեկույցի ընդհանուր համատեքստում իր արժանի տեղն են գտել Դ. Հ. Լորենսի հիմնարար գիտական աշխատությունները՝ «Հոգեվերլուծությունը և անգիտակցականը» և «Անգիտակցականի ֆանտազիան», որոնցում ներկայացված են հեղինակի պատկերացումները մարդկային բնության (գիտակցականի և անգիտակցականի) և սեռերի միջև փոխհարաբերության խնդիրների վերաբերյալ, և կարևորագույն եզրույթները՝ «արյան գիտակցություն» (blood–consciousness) և «մտքի գիտակցություն» (mind–consciousness): Վ. Շեքսպիրի պիեսը քննվում է գիտական նոր հարթության վրա՝ ոչ որպես սիրային–ռոմանտիկական ստեղծագործություն, որի ողբերգական ավարտն ասես ամրապնդում է երկու հերոսների միջև բացարձակ սիրո գաղափարը, այլ որպես պլատոնական սիրո հնացած գաղափարի դեմ ծրագրված մարտահրավեր, որի հիմնական խնդիրը բնական–մարմնական սիրո գովերգումն ու դրա հակադրումն է միջնադարյան կարծրատիպերին:

Pr. Charles Fairbanks
Ilia State University
Georgia

SHAKESPEARE ON THE COMING OF THE RENAISSANCE

I investigate *Richard II* and the three Henry plays, concentrating on anachronisms that confuse Shakespeare's time with a century earlier. Falstaff, for example, mimics Puritan discourse. He was Sir John Oldcastle, proto–Protestant heretic and martyr. Oldcastle allowed Shakespeare to project, in parody, the religious tensions of his time into the early fifteenth century. He serves to *compress history*.

In Richard II's divine and cosmic kingship "murders, treasons and detested sins…stand bare and naked, *trembling at themselves*," without Richard's effort (3.2, 3.3.178–79). This concept ends in tyranny and loses him the crown. As Harry Berger saw, Richard, personally fused with kingship, can only yield by ritually reversing his coronation. His world is confined to the high nobility; only some gardeners suggest a Socratic *techne* of rule that completes nature.

Usurping Henry IV tries to bring it. By assiduous attention, contrived generosity, trickery and ruthlessness, he emulates Machiavelli's prince successful by *virtù*, not by fortune. Like a modern man, his job could go to a better applicant, to Hotspur. Replacing divine right with effort, he is overworked, "wan with care," and sleepless, like many contemporary executives.

The price of illegitimate rule in "the body of our Kingdom" is "how foul it is, what rank diseases grow" (*Part 2*, 3.1.38–39). The social bottom is newly exposed. An inn once run by Robin Oster –Richard II – is now "turned upside down," infested by intestinal worms and fleas. England likewise is infested with robbers, from the aristocratic rebels to Falstaff and his gang. Thus, late Renaissance liberation from fortune and heaven fails to fulfill its promise.

Prince Hal, cleverer, will "imitate the sun," first hiding behind, then "breaking through the foul…mists." No critic has detected his model, Machiavelli's Severus who subdues fortune by changing his nature, from fox to lion (*Principe* 19). Henry V will use the emerging gentry and lower classes. He promises:

For he today that sheds his blood with me
Shall be my brother, be he ne'er so vile

This day shall gentle his condition.

Henry V cures the infection by creating a "meritocracy" of "high achievers," regardless of social station or ethnicity. His Fluellen asserts Welsh equality by making Pistol eat a leek. Prince Hal, unlike Mowbray, Mortimer and Hotspur, had learned how to "drink with any tinker in his own language" (*Part 1*, 2.4.15–16), and as Henry V wants a woman to teach him the language of courtship (5.2.95–103). Violating French custom, Henry V kisses Katherine because "you and I cannot be confined within the weak list of a country's fashion. We are the makers of manners, Kate…."

Universality gradually triumphs of over national and religious custom. The universal is impersonal: the Lord Chief Justice could jail Prince Hal because he "[re]presented," in Hobbes' manner, the King "in a second body." Power and the thirst for eternal glory conquer time and place. These plays are not a *product* of the Renaissance, but Shakespeare's *thinking–through* of how modernity was arriving.

Չարլզ Ֆերբենքս
Իլիայի անվան համալսարան
Վրաստան

ՇԵՔՍՊԻՐԸ՝ ԳԱԼԻՔ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՄԱՍԻՆ

Ես մեկնաբանում եմ «Ռիչարդ Երկրորդ» և «Հենրի Չորրորդ» դրամաները՝ կենտրոնանալով անախրոնիզմների վրա, որոնք կարող են շփոթություն առաջացնել հեղինակի ապրած ժամանակաշրջանի և հարյուր տարի առաջ տեղի ունեցած դեպքերի միջև: Օրինակ՝ Ֆալստաֆի կերպարը հիշեցնում է հերետիկոս և նահատակ Սեռ Ջոն Օլդքասլին: Օլդքասլը նախատիպ էր, Շեքսպիրի համար սրախոսությունների միջոցով ներկայացնելու իր ժամանակի կրոնական հալածանքները, քաղաքական լարվածությունը, ծառայելով պատմությունը ընդհանրացնելու և բնութագրելու իր փորձին:

Ռիչարդ II–ի «աստվածային և տիեզերական» կառավարության օրոք «սպանությունները, դավաճանություններն ու նողկալի մեղքերը… սարսռելով հառնում են մերկ ու անզեն» առանց Ռիչարդի ջանքերի (3.2, 3.3, 178-179): Այս գաղափարը հանգեցնում է բռնակալության հաստատմամբ և իր թագի կորսուստով: Ըստ Հարի Բերգերի, Ռիչարդը, միայն անձնապես միջամտելով պետության կառավարմանը, տապալելով թագադրությունը գնարավոր է դեպքերի ընթացքը փոխել:

Նրա աշխարհը սահմանափակված է բարձրաստիճան ազնվականությամբ, միայն մի քանի համախոհներ են ընդունում իր կառավարման սոկրատեսյան դրույթը, որ հարազատ է բնության համաչափությանը:

Ուզուրպատոր Հենրի 4–րդը փորձում է հենց դա իրագործել: Գերակտիվ ուշադրությամբ, կեղծ մեծահոգությամբ, խաբեությամբ և անգթությամբ նա կրկնօրինակում է Մաքիավելլիի արքայազնին, ոչ թե ժառանգաբար, այլ բռնությամբ հասնելով իշխանությանը: Պատմության մեջ հայտնի է, որ գահը կարող էր փոխանցվել ավելի լավ թեքնածուի՝ Հոթսփարին:

«Թագավորության մեջ» ապօրինի կառավարման գինը լինում է «ինչքան հիվանդ է այն, այնքան արագ են հիվանդություններն աճում» (2, 3.1.38–39): Սոցիալական ցածր խավը նորովի բացահայտվում է: Պանդոկը, որ ժամանակին վարում էր Ռոբին Օսթլերը – Ռիչարդ II– ը, «հիմա տակնուվրա է արված», լցված որդերով և լվերով: Անգլիան նմանապես լցված է գողերով՝ արիստոկրատ ապստամբներից մինչև Ֆալստաֆը և նրա բանդան: Այսպիսով՝ ուշ վերածնունդի անկախացումը ճակատագրից և Աստծուց չի արդարացնում իր խոստումը:

Արքայազն Հալը՝ ավելի ճարպիկ, օրինակ է առնում է արևից՝ սկզբում թաքնվելով ամպերի հետևում, ապա հայտնվում է «ճեղքելով խոնավ … մառախուղները»: Ոչ մի քննադատ չի անդրադարձել նրա նախատիպին՝ Մաքիավելլիի Սեվերուսին, ով փոխում է ճակատագրի ընթացքը՝ աղվեսից առյուծի վերամարմնավորմամբ (Արքայազն, Սկզբունք 19):

Հենրի Հինգերորդը կօգտագործի նոր ձևավորվող ազնվականությունը և հասարակության ցածր խավերին: Նա խոստանում է.

«Քանզի նա, ով այսօր կթափի իր արյունն ինձ հետ,
Կդառնա իմ եղբայրը, որքան էլ հասարակ լինի իր ծնունդով,
Այդ օրը կշնորհի նրան ազնվականի կոչում»:

Հենրի V–ը բուժում է վարակը՝ ստեղծելով իշխանավորների նոր խավ անկախ սոցիալական կամ ազգային պատկանելությունից: Նրա Ֆլուելենը հաստատում է Ուելսի հավասարության սկզբունքը՝ Փիսթոլին ստիպելով պրաս ուտել: Արքայազն Հալը, ի տարբերություն Մոբրեյի, Մորթիմերի և Հոթսփարի, սովերել էր «բաժակ բարձացնել յուրաքանչյուր փինաչու հետ իր լեզվով» (1, 2.4, 15–16), և Հենրի V–ը ցանկանում է, որ կինն իրեն սովորեցնի սիրահետելու լեզուն (5.2, 95–103): Խախտելով ֆրանսիական պալատական ավանդույթը՝ Հենրի V–ը համբուրում է Քեթրինին, որովհետև «ինձ և քեզ չի կարելի սահմանափակվել այս երկրի քմահաճ սովորույթների խղճուկ օրենքներին: Մենք ենք օրենք ստեղծողը, Քե՛յթ…»:

Ունիվերսալիզմը աստիճանաբար հաղթում է ազգային և կրոնական բարքերին: Համամարդկային օրենքը անկողմնակալ է. գլխավոր դատավորը կարող էր ձեռբակալել արքայազն Հալին, քանզի նա մարմնավորում է, ըստ Հոբսի, թագավորի «երկրորդական մարմինը»: Ուժը և հավերժական փառքի ծարավը հաղթում են ժամանակն ու երկիրը: Այս դրամաները Վերածննդի ծննունդներ չեն, այլ Շեքսպիրի նախազգացումները, գալիք նոր ժամանակների վերաբերյալ:

Dr. Anna Khachatryan
Yerevan State University
Armenia

TEACHING SHAKESPEARE AS A MEANS OF SHAPING AN INDIVIDUAL'S WORLDVIEW

One of the reasons why Shakespeare's plays have proved so popular for so long is their infinite capacity for adaptation. As society changes, so do the meanings found in the plays. For 400 years, the plays have been interpreted in an astonishing variety of ways. Just as the same play can be performed very differently, so it can be taught and experienced in very different forms.

Teachers and students always eagerly respond to the multiple possibilities of Shakespeare's scripts. Each play works on many levels. It has a plot and structure, a deeper, exact and metaphoric meanings, naturalistic and symbolic potentialities. Shakespeare's characters, stories and themes, expressed through his unique language and style, have been a basis of interpretations of the meaning and the significance for every generation. Their relevance lies in the virtually endless opportunities they offer for reinterpretation and local application of familiar human relationships.

In Shakespeare, the private and the public, the individual character and the social world are organically interconnected. So students who explore his great works gain a deeper understanding of the interrelation of individual and society. This experience contributes to shaping their worldview.

Աննա Խաչատրյան
Երևանի պետական համալսարան
Հայաստան

ՇԵՔՍՊԻՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՏԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Շեքսպիրի ստեղծագործությունների հարատևության պատճառներից մեկը դրանց՝ հարմարեցման անսահման հնարավորություններն են: Հասարակության զարգացմանը զուգընթաց՝ փոփոխվում են նաև նրա պիեսների իմաստային նրբերանգները: 400 տարի շարունակ Շեքսպիրի ստեղծագործությունները մեկնվել են զարմանալիորեն

տարբեր տեսանկյուններից: Միևնույն պիեսը կարող է ներկայացվել շատ տարբեր եղանակներով, ճիշտ այնպես, ինչպես և դասավանդվել և ընկալվել ամենատարբեր ձևերով:

Ուսուցիչներն ու ուսանողները միշտ պատրաստ են արձագանքելու Շեքսպիրի կերտվածքների բազմազան հնարավորություններին: Յուրաքանչյուր պիես գործում է բազմաթիվ մակարդակներում, ունի մակերեսային և խորքային կառուցվածք, օժտված է բառացի և փոխաբերական իմաստներով, բնագիտական և խորհրդանշական կարողություններով: Յուրաքանչյուր սերնդի համար Շեքսպիրի յուրահատուկ լեզվի և ոճի միջոցով արտահայտում գտած կերպարները, պատմություններն ու սյուժեները հանդիսացել են իմաստի և նշանակության մեծ աղբյուր: Այս ամենի գաղտնիքն ընկած է բոլորին ծանոթ մարդկային փոխհարաբերությունների վերամեկնության և կիրառման այն անսահման հնարավորությունների մեջ, որ ընձեռում են Շեքսպիրի ստեղծագործությունները:

Շեքսպիրի մոտ ներդաշնակորեն փոխկապակցված են մասնավորն ու հանրայինը, անհատական կերպարն ու հասարակական աշխարհը: Ուստի նրա մեծ ժառանգությունը հետազոտողներն առավել խորությամբ են ըմբռնում անհատի և հասարակության փոխադարձ կապը, ինչը նպաստում է նրանց աշխարհայացքի ձևավորմանը:

Dr. Anush Sedrakyan
Yerevan State University
Armenia

INTERPRETATION OF LEGAL AND ETHICAL NORMS IN SHAKESPEARE'S PLAYS

Renaissance in England was marked by deviations from European renaissance, as it focused mostly not on the idea of humanism and human magnitude but on the idea of human character and human nature, which is not decisively great as a "human being" but rather imperfect, subjected to passions and vices and still appreciated and estimated in this imperfection.

Accordingly, human vices and sins are presented by Shakespeare as emotional peaks, where a person could be guilty but never judged. This later emanated into Shakespearean code of 'new ethics' which led to the acceptance of human being, while the Renaissance culture in France and in Italy mainly preferred to worship.

Thus, jealousy, vanity, greediness and other unfavorable human qualities are first and foremost presented as human therefore disputable and ambiguous. This internal ambiguity is best explained by a distinct borderline between so called "Pagan" and "Christian" heroes, in a huge scope of Shakespearean main characters this classification helps to distinguish between "old" and "new" ethical concepts.

By the way, Shakespeare successfully reconciles these two polar extremities, representing, for example, Othello as a pagan warrior and suffering human being. Ethical and moral discrepancies are blurred due to powerful human emotions which underscore the unity of human nature despite the mental and ethical bias. Shylock's famous soliloquy is dedicated to this very concept of unity. It resonates with Hamlet's monologue where this unity is presented as human mortality. Shakespeare's heroes convey the individual and social functions altogether. Sometimes these functions mismatch and it is reflected in plays of different genres–tragedies and comedies.

Being powerful, according to Pagan ethical code, is important but in the Christian ethical code, it is far more vital is being human and merciful. Human nature comprises weaknesses and sins – the characteristic of the most Shakespeare's positive characters such as Othello, King Lear and others. Another aspect is lawfulness and loyalty, the first attempt of "institutionalizing" and "classifying" human behavior which is reflected in *The Merchant of Venice* and *Macbeth* that will be equally discussed in this paper.

Pr. Kang Kim
Honam University
South Korea

GRAPHIC SHAKESPEARE IN KOREA: AN EDUCATIONAL TOOLBOX

The presence or introduction of Shakespeare into the condensed imaginary world of cartoons and comic books is a relatively recent phenomenon in Korea when compared to a long history of reception of Shakespeare on stage. The first appearance of Korean comics began with the publication of so–called "high–teen" magazines such as *Hakwon*, targeting the younger generation mostly including middle and high school students in the early 1950s after the devastating Korean War. They were printed in a weekly or monthly serialized form, a popular format at the time. However, Shakespeare has been rarely appeared in the panels of comic magazines or books, although the advent of modernized comics hit in the nation.

Comics were commonly regarded to be a product of lowbrow subculture and most Koreans took Shakespeare only as an iconic equivalent of the dramatic creation. In the 1960s and 70s Korean comics became heavily influenced by an influx of the Japanese comics, or manga and TV animation series including *Iron Arm Atom* and *Candy*. Japanese "girls' comics" has consequently transplanted its content and drawing style into a "romantic comics" of Korea.

Today many of the Korean comic books of Shakespearean adaptation are still subject to the influence. This presentation will introduce a brief history of reception of Shakespeare/comic adaptation of Shakespeare in Korea and examine the socio–cultural context in which these adaptations are commercially appropriated and educationally circulated among young students in the nation. Comparison between the three versions of Shakespeare manga from England, Japan, and Korea will be part of my critical discussion.

Քանգ Քիմ
Հոնամի համալսարանի պրոֆեսոր
Հարավային Կորեա

ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՇԵՔՍՊԻՐԸ ԿՈՐԵԱՅՈՒՄ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ

Շեքսպիրի ներկայությունը կամ ներածությունը պատկերա- պատումների կամ կոմիքսների խտացված երևակայական աշխարհում բոլորովին նոր երևույթ է Կորեայում՝ համեմատած Շեքսպիրի բեմական ընդունելության երկարատև պատմության հետ: Կորեական կոմիքսներն առաջին անգամ հայտնվեցին 1950–ականների սկզբներին Կորեական պատերազմից հետո հրապարակվող այսպես կոչված «բարձր տարիքի դեռահասների» ամսագրերում, որոնցից է, օրինակ, «Հակվոն»–ը (Hakwon), որոնք ուղղված էին երիտասարդ սերնդին, հիմնականում՝ միջին և ավագ դպրոցի աշակերտներին: Դրանք տպագրվում էին շաբաթական կամ ամսական կտրվածքով՝ շարքերի ձևով, որն այդ ժամանակ տարածված ձևաչափ էր:

Այդուհանդերձ, Շեքսպիրը հազվադեպ է հայտնվել կոմիքսների ամսագրերում կամ գրքերում, և արդիականացված կոմիքսների միջոցով նրա մուտքը ընթերցողի կողմից շատ դրական է եղել: Կոմիքսները համարվում էին ցածրակարգ մշակույթի արտադրանք, քանի որ կորեացիներն ընդհանուր առմամբ Շեքսպիրին ընդունել էին որպես թատերական արվեստի հզոր խորհրդանիշ: 1960–ական և 70–ական թվականներին կորեական կոմիքսները մեծապես ազդվեցին ճապոնական կոմիքսների կամ մանգայի և հեռուստատեսային անիմացիոն շարքերի ներհոսքից («Երկաթաբազուկ Ատոմը» (Iron Arm Atom), «Կոնֆետ»–ը (Candy) և այլն): Ճապոնական «աղջիկների կոմիքսների» բովանդակությունն ու պատկերային ոճը Կորեայում թարգմանվեցին որպես «ռոմանտիկ կոմիքսներ»: Այսօր վերամշակված շեքսպիրյան կոմիքս–գրքերը դեռևս ենթակա են այդ ազդեցությանը:

Այս զեկույցը կներկայացնի Կորեայում կոմիքսների միջոցով վերամշակված շեքսպիրյան գործերի ընկալման հակիրճ պատմությունը և կքննի այն հասարակա–մշակութային համատեքստը, որում այս վերամշակումները կոմերցիոն ձևով յուրացվում են և կրթական նպատակներով շրջանառվում աշակերտների շրջանում: Նաև քննադատորեն կհամեմատի և կվերլուծի շեքսպիրյան երեք մանգաները՝ Անգլիայից, Ճապոնիայից և Կորեայից:

Dr. Xenia Georgopoulou
National and Kapodistrian University of Athens
Greece

"SHAKESPEARE AND THE POLITICS OF MODERN GREECE"

"Something is rotten in the Eurozone kingdom" was the title of an article by Yanis Varoufakis, former Minister of Finance of Greece, in *The Financial Times* on 29–7–2015, in the middle of the Greek financial crisis. A little earlier (10–2–2015) writer and journalist Takis Theodoropoulos, in an article in the Greek newspaper *Kathimerini*, regarded the Prime Minister of Greece Alexis Tsipras as "A Hamlet of the Left" (which was also the title of the article), referring to the "internal pressure" he had to suffer due to the crisis. Apart from *Hamlet*, the Shakespearean play that was apparently considered as the most relevant to the Greek financial crisis was *The Merchant of Venice*, for obvious reasons; politician Panos Skouroliakos (of the ruling party) as well as Vassilis Droukopoulos, Professor of Political Economy at the University of Athens, in their respective articles in the newspaper *Avgi* (the former on 7–2–2015 and the latter as early as 2–9–2012), but also the anonymous blogger of *Tromaktiko* (on 20–3–2013), drew similarities between Shylock and Greece's creditors. The same parallels were drawn in foreign articles, too, but also in a short debate on *Shaksper*, proving that the Greek crisis is apparently a topic of particular interest not only abroad, but also among Shakespearean scholars. On the other hand, comedy shows, both on television and online, present a comical version of Greece's financial disaster, mostly seen from the point of view of the citizens who suffer the crisis.

This paper will provide a short introduction on Shakespeare's relevance to modern Greek historical contexts, and will subsequently explore a variety of references to Shakespeare's plays (plots, characters, quotes etc.) in recent Greek political speech, articles (both in print and online) about late 20th and 21st century politics in Greece (including parties, politicians et al.), as well as television programmes and online shows with political views of the last decades, focusing on the current financial crisis in the country.

Քսենիա Ջորջոպուլու
Աթենքի ազգային և կապոդիստրյան համալսարան
Հունաստան

ՇԵՔՍՊԻՐՆ ՈՒ ԱՐԴԻ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Եվրոգոտու արքայության մեջ մի բան է փտել»՝ այսպիսին էր Հունաստանի նախկին ֆինանսների նախարար Յանիս Վարուֆակիսի հոդվածի վերնագիրը, որը տպագրվել էր «Ֆայնենշըլ Թայմզում» (The Financial Times) 2015 թվականի հուլիսի 29–ին՝ Հունաստանի ֆինանսական ճգնաժամի շրջանում: Փոքր–ինչ ավելի շուտ (2015 թ. փետրվարի 10–ին) գրող, լրագրող Թակիս Թեոդորոպուլոսը հունական «Քաթիմերինի» թերթի մի հոդվածում Ալեքսիս Ծիպրասին անվանել էր «ձախակողմյան Համլետ» (որը նաև հոդվածի վերնագիրն էր), նկատի ունենալով այն «ներքին լարվածությանը», որով վերջինս տառապում էր ճգնաժամի պատճառով:

Մեկ այլ շեքսպիրյան պիես, որն ակնհայտորեն համարվում էր երկրի ֆինանսական ճգնաժամին ամենաբնորոշը, «Վենետիկի վաճա- ռական»-ն էր: Բացահայտ պատճառներով, իշխող կուսակցության քաղաքական գործիչ Պանոս Սկուրոլիակոսն ու Աթենքի համալ- սարանի քաղաքական տնտեսագիտության պրոֆեսոր Վասիլիս Դրուկոպուլոսը «Ավգի» լրագրում տպագրված իրենց համա- պատասխան հոդվածներում (առաջինը՝ 2015 թ. փետրվարի 7–ին, երկրորդը ավելի վաղ՝ 2012 թ. սեպտեմբերի 2–ին), ինչպես նաև Տրոմակտիկոյի անանուն բլոգերը (2013 թ. մարտի 20–ին), ովքեր Հունաստանի վարկատուներին նմանեցրին Շայլոկին: Նույն զուգա- հեռները նաև անցկացվեցին արտասահմանյան հոդվածներում, ինչպես նաև փոքրամասշտաբ շեքսպիրյան բանավեճերում՝ հաստատելով, որ հունական ճգնաժամը հետաքրքրական թեմա է ոչ միայն արտասահմանում, այլ նաև շեքսպիրագետների շրջանակներում: Մյուս կողմից՝ հեռուստատեսային և առցանց սրամիտ շոուները ներկայացնում են Հունաստանի ֆինանսական աղետի հումորային տարբերակը՝ հիմնականում ներկայացնելով այն քաղաքացիների՝ ճգնաժամի տուժածների դիտանկյունից:

Այս զեկուցումը հակիրճ ձևով կներկայացնի արդի հունական պատմական համատեքստում Շեքսպիրի ակտուալությունը, այնուհետև կուսումնասիրի մի շարք հղումներ՝ արված Շեքսպիրի պիեսներից (սյուժեներ, կերպարներ, մեջբերումներ) քաղված վերջին ժամանակաշրջանի քաղաքական ելույթներից, 20–րդ դարի վերջի և 21–րդ դարի Հունաս-

տանի քաղաքականության (կուսակցությունների, քաղաքական գործիչների) մասին թե՛ տպագիր և թե՛ առցանց հոդվածներում, ինչպես նաև հեռուստահաղորդումներում և առցանց շոուներում: Այս մեջբերումների միջոցով ներկա դասախոսությունը անդրադառնում է վերջին տասնամյակների հունական ինչպես և եվրոպական քաղաքականությանը Հունաստանի հանդեպ, որ կենտրոնացած է երկրի ներկա ֆինանսական ճգնաժամի վրա:

Dr. Zorica Bečanović Nikolić
University of Belgrade
Serbia

SHAKESPEARE IN SERBIA: TRANS–CULTURAL APPROPRIATIONS

This paper examines an episode in the reception of Shakespeare in the 19th century Serbian culture: a famous celebration of Shakespeare's Tercentenary in 1864 in Novi Sad, and a remarkable narrative poem *On Shakespeare's Tercentenary* written by Laza Kostić, the most original author of the Serbian Romanticism. The poem was written in Serbian, followed by an attempt of a version in English, which was this polyglot's fourth foreign language. An experiment of writing a poem in two languages is worthy of attention, especially in the light of the fact that the autograph of the English version is a very recent discovery (2015) and hasn't been written about yet. The paper will show the trans–cultural function of the poetic devices Laza Kostić used in both versions of the poem (iambic pentameter, alliterations – neither of which was characteristic of Serbian poetic diction – and Shakespeare's characters/plots as mythical figures and poetic symbols "in states unborn, and accents yet unknown"). The other trans–cultural focus of this paper will be on the role that German literature in general, German appropriations, interpretations and translations of Shakespeare (Goethe, Schiller, A. W. Schlegel, G. G. Gervinus) played in the reception of Shakespeare in Serbia. Laza Kostić configured the poetic address he made to Shakespeare in his poem as a dialogic triangle: Shakespeare in relation to Serbian culture via an implied critical consideration of German culture and German Shakespeare. In showing the trans–cultural, national and supranational character of the appropriation of Shakespeare in the 19th century Serbia, the conclusion will rely on several points G. C. Spivak has recently made in her study *An Aesthetic Education in the Era of Globalization* (2013).

Special aspect of this research will concern a topic recently discovered, thanks to Jasmine Seymour of the Armenian Shakespeare Association. That is a considerable parallel between the poem *Shakespeare* (1916) written by Zabelle C. Boyajian and the poem *On Shakespeare's Tercentenary* by Laza Kostić, which includes comparative similarities in contents, attitude towards Shakespeare, imagery and metaphorical expressions, as well as the assumed intercultural context.

Զորիցա Բեկանովիչ Նիկոլիչ
Բելգրադի համալսարան
Սերբիա

ՇԵՔՍՊԻՐԸ ՍԵՐԲԻԱՅՈՒՄ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՐԱՑՈՒՄՆԵՐ

Այս զեկույցը մեկնաբանում է 19–րդ դարի Սերբիայում 1864 թվականին Նովի Սադում տեղի ունեցած հայտնի տոնակատարությունը՝ նվիրված Շեքսպիրի երեքհարյուրամյակին, և նշանավոր բանաստեղծությունը «Շեքսպիրի երեքհարյուրամյակին»՝ գրված սերբական ռոմանտիզմի ամենաինքնատիպ հեղինակներից մեկի՝ Լազա Կոստիչի կողմից: Պոեմը գրվել է սերբերենով, որին հաջորդել է անգլերեն թարգմանության փորձը, որը բանաստեղծ- պոլիգլոտի չորրորդ օտար լեզուն էր: Պոեմը երկու լեզվով գրելու փորձն արժանի է ուշադրության, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ անգլերեն տարբերակի ձեռագիրը միայն վերջերս է հայտնաբերվել (2015 թ.), և որի մասին դեռ ոչինչ չի գրվել:

Այս աշխատությունը անդրադառնում է այն գրական հնարքներին, որոնք Լազա Կոստիչը կիրառել է պոեմի երկու տարբերակներում (յամբական հնգոտնյա տող, նմանաձայնություններով, որ հարազատ չեն սերբական բանաստեղծական տաղաչափությանը, ինչպես նաև շեքսպիրյան կերպարները և հերոսները «դեռևս չծնված պետություններում և անհայտ առոգանություններով»):

Զեկուցման նպատակներից է նաև լուսաբանել գերմանական գրականության և թարգմանությունների (Գյոթեի, Շիլլերի, Շլեգելի, Գերվինուսի) դերը Սերբիայում՝ Շեքսպիրի ընկալման գործում: Լազա Կոստիչը իր շեքսպիրյան ձոնը ներկայացնում է երեք տեսանկյուններից՝ Շեքսպիրը սերբական մշակույթի, գերմանական մշակույթի և շեքսպիրյան գերմանական տեսանկյուններից: Ցույց տալով 19–րդ դարի Սերբիայում Շեքսպիրի ազգամիջյան, ազգային և վերազգային ազդեցությունը՝ մեր եզրահանգումը հիմնված է Չ. Սպիվակի «Գեղագիտական կրթությունը գլոբալացման դարաշրջանում» (2013 թ.) հետազոտության մեջ արված մի քանի եզրահանգումների վրա:

Այս զեկուցման մեկ բաժինն անդրադառնում է Զաբել Բոյաջյանի պոեմին, շնորհիվ Հայ շեքսպիրյան ընկերության ղեկավար Հասմիկ Սեյմուրի: Մի շարք զուգահեռներ կան հայ բանաստեղծուհի Զաբել Բոյաջյանի «Շեքսպիրին» (1916) վերնագրով ձոն–բանաստեղծության և սերբացի Լազա Կոստիչի «Շեքսպիրի երեքհարյուրամյակին» պոեմի միջև, կարելի է համեմատություններ անել բովանդակության, Շեքսպիրի հանդեպ մոտեցման, պատկերային և փոխաբերական արտահայտությունների և ենթադրյալ համատեքստերի միջև:

Bakhtiar Hovakimyan
Theatre critic and author
Matenadaran Museum
Armenia

SHAKESPEARE IN ARMENIAN THEATRE

In the last two centuries, Shakespeare and his works have become an inseparable part in the intellectual life of Armenians. The first translated pieces of plays appeared in the Armenian press in the 1820s, followed by studies and evaluations of Shakespeare's dramaturgical heritage.

In the 1860's Shakespeare's tragedies and comedies started to be translated and staged in Armenian language (1866). During the same period, Shakespeare's influence could be seen on the Armenian dramaturgy, in the works of P. Durian, S. Heqimian, A. Gulamirian and G. Sundukian.

The first stage production of *Hamlet* in the Armenian theatre (1880), thanks to Petros Adamian in the role of Hamlet both in Armenian and in French, brought recognition to Armenian Shakespearean theatre in Russia and Europe. The first and only female performer of Hamlet in the eastern countries was Siranuysh, who appeared in this role in Transcaucasus, Russia, Bulgaria, Egypt and Iran between 1901 and 1921.

Vahram Papazian, another acclaimed Armenian actor, polyglot, writer and translator, was best known for his interpretation of Othello. Between 1908 and 1964 he appeared in the role of Othello more than 4000 times, in 6 languages in Transcaucasus, Russia, Europe, Egypt.

In the 1960s Armenian Shakespeare Studies Center was created at the Art Institute of Armenian National Academy of Sciences. Seven volumes (yearbooks) of the research produced by the centre of Shakespearean studies, conference papers by national and foreigns scholars were published from 1965 to 1985.

Thirty–six plays by Shakespeare by 85 translators have been translated into Armenian, 25 plays have been staged in various Armenian stages in Armenia and across its vast diaspora. Armenians have contributed to Shakespearean theatre with 94 performers of Othello and 79 performers of Hamlet. Such is the role of the perpetual companion William Shakespeare in the history of Armenian theatrical and cultural life. This paper will outline the major characteristics of author's 500-page complete bibliography of *Shakespeare in Armenian Theatre* (2012) from its beginnings till 2012.

Բախտիար Հովակիմյան
Թատերագետ և մատենագետ
Մատենադարան
Հայաստան

ՇԵՔՍՊԻՐԸ ՀԱՅ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Շուրջ երկու դար է, ինչ Շեքսպիրը և նրա ստեղծագործությունները դարձել են հայ ժողովրդի մտավոր կյանքի անբաժանելի մասը: 1820–ական թվականներին առաջին անգամ հայկական մամուլում տեղ են գտել թարգմանություններ քաղվածքներ Շեքսպիրի պիեսներից: Դրան հետևել են շեքսպիրյան դրամատուրգիական ժառանգության ուսումնասիրությունն ու գնահատությունը:

1860–ական թվականներից սկսվել են բեմադրվել (1866) Շեքսպիրի ողբերգություններն ու կատակերգությունները հայերենով: Այդ նույն շրջանի հայ դրամատուրգիայում նկատելի է շեքսպիրյան որոշակի ազդեցություններ (Պ. Դուրյան, Ս. Հեքիմյան, Ա. Գուլամիրյան և Գ. Սունդուկյան):

«Համլետի» առաջին բեմադրության (1880) մեջ Համլետի դերակատար Պետրոս Ադամյանի շնորհիվ շեքսպիրյան հայ թատրոնը ճանաչում է գտել Ռուսաստանում և Եվրոպայում, որ խաղացել է հայերեն և ֆրանսերեն լեզուներով: Արևելքի ժողովուրդների թատրոնում Համլետի առաջին և միակ կին դերակատարը եղել է Սիրանույշը, որը 1901–1921 թվերին այդ դերով հանդես է եկել Անդրկովկասում, Ռուսաստանում, Բուլղարիայում, Եգիպտոսում, Իրանում:

Հայ իրականության մեջ մեծ իրադարձություն է եղել Վահրամ Փափազյանի Օթելլոն, որով նա 1908–1964 ժամանակահատվածում հանդես է Օթելլոյի դերում եկել վեց լեզուներով, ավելի քան 4000 անգամ Անդրկովկասում, Ռուսաստանում, Եվրոպայում, Եգիպտոսում և այլ երկրներում:

1960–ական թթ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արվեստի ակադեմիային կից ստողծվել է Հայ շեքսպիրագիտության կենտրոնն իր բազմալեզու գրադարանով և արխիվով: Հրատարակվել է «Շեքսպիրական» տարեգրքի յոթ հատորներ՝ նվիրված հայ և համաշխարհային շեքսպիրագիտության հարցերի լուսաբանմանը:

Հայ թատրոնում Շեքսպիրից թարգմանվել է 36 պիես, 85 թարգմանիչների կողմօց, բեմադրվել՝ 25–ը: Հայերը շեքսպիրյան թատրոնին տվել են Օթելլոյի 94 դերակատար, իսկ Համլետի 79 դերակատար: Այսպիսին է մեր մշտական ուղեկից Շեքսպիրի դերը հայ թատերամշակութային կյանքի պատմության մեջ: Սույն զեկուցումը ներկայացնում է հեղինակի 500 էջանոց ծավալուն մատենագիտական աշխատանքը «Շեքսպիրը հայ բեմում» խորագրով, որն ամփոփել է հայ շեքսպիրյան ժառանգության ողջ տարեգրությունը սկզբից մինչև 2012 թվականը:

Pr. Emil Sîrbulescu
University of Craiova
Romania

STANCES OF ENDURANCE: HOW A PROVINCIAL THEATRE TURNED GLOBAL – THE CRAIOVA INTERNATIONAL SHAKESPEARE FESTIVAL

The Romanian 19th century is deeply marked by the Shakespearean obsession. The Shakespearean repertoire found its foremost position among the first theatrical representations; it is the reason why its translation into Romanian started at the same time with the founding of the first Romanian theatres. During a few decades only, the taste of the audience, refined by the Shakespearean productions, came to sanction plagiarism and the cheap localization and to firmly encourage the original plays. This aspect of the stimulation of original creativity is by far the most important of all, as it is difficult to find a Romanian playwright who was not influenced by the Shakespearean model.

In the Communist period, the theater was a place of exorcising the spiritual demons of the totalitarian political pressure, a generic space of escapist illusion. Things have not changed much after the institution of democracy in 1989. In the hectic years of post–Communist novel democracy, however, the theater has become a sanctified cultural location where people can escape financial austerity through immersion in the never–never land of imagination onstage. With the fall of Communism in 1989, everything changed the opening of the borders offered ample opportunities to the Romanian theatre companies to make themselves known in the world, and the Craiova National Theatre was no exception.

The first edition was organized in 1994. The first five festival editions were organized every three years, and, since 2006, the festival has taken place every two years, and some of the performances invited to Craiova have started to be also taken to Bucharest, the capital of Romania. Thus, the festival has kept growing from one edition to another. Since the first festival edition, in 1994, when, among the Shakespearian performances presented then, there was only one foreign company invited to Craiova, numerous prestigious theatres have brought their productions to Romania.

Some years ago, I was asked by members of the Nagoya Theatre Convention and Nagoya Shakespeare Association to explain the mystery behind the

endurance of theatrical activity in Craiova – a Romanian center of industry and commerce – and the organization of an international Shakespeare festival. They even submitted 13 questions to be answered during the presentation and which are still viable today. The Festival has just reached its tenth edition and the mystery behind it is found in the 19th century enthusiasm of the first theatre–goers and in the determination of a provincial theatre to overcome the limitations imposed by geographical, economical, and political factors. My presentation is an incursion in the birth and life of the twenty years old Shakespeare Festival in Craiova, Romania.

Էմիլ Սիրբելեսկու
Կրայովայի համալսարան
Ռումինիա

ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԻ ՊՐՈՎԻՆՑԻԱԼ ԹԱՏՐՈՆ ԴԱՐՁԱՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ՓԱՌԱՏՈՆ

Տասիններորդ դարի Ռումինիան խորապես ազդված էր Շեքսպիրով: Շեքսպիրյան ռեպերտուարը առաջնակարգ տեղ ուներ թատրոններում, դա էր պատճառը, որ առաջին թարգմանությունները և բեմադրությունները միմյանց զուգակցում էին: Միայն մի քանի տասնամյակում հանդիսատեսի ճաշակը, շեքսպիրյան դրամաներից հղկվելով, մերժում էր էժանագին կրկնօրինակները և պահանջում ինքնատիպ ներկայացումներ: Սա կարևոր հանգամանք էր, քանի որ ժամանակի բոլոր դրամատուրգները Շեքսպիրի մեծ ազդեցության տակ էին ստեղծագործում:

Կոմունիստական հասարակարգի ժամանակ թատրոնը դարձավ մի վայր, որտեղ հնարավոր էր ձերբազատվել բռնակալական գաղափարախոսությունից և տրվել երևակայությանը: Իրավիճակը շատ չի փոխվել 1989 թվականի հեղաշրջումից ի վեր: Կոմունիստական կարգերին հաջորդած խուճապահար ժամանակներում, այնուամենայնիվ, թատրոնը մի վայր է, ուր հնարավոր էր փախչել առօրյա տնտեսական հոգսերից և սուզվել երևակայության մեջ: 1989 թվականին՝ կոմունիզմի անկումից հետո, ամեն ինչ փոխվեց՝ հնարավորություն տալով ռումինական թատերախմբերին երկրի սահմաններից դուրս գալու, և Կրայովայի ազգային թատրոնը բացառություն չէր:

Առաջին փառատոնը Կրայովայում իրականություն դարձավ 1994 թվականին: Առաջին հինգ փառատոները տեղի ունեցան երեք տարին

մեկ, իսկ 2006 թվականից սկսած՝ փառատոնը նաև գալիս էր Բուխարեստ: Այսպիսով՝ փառատոնը գնալով աճում էր: Շատ հեղինակավոր օտարերկրյա թատերախմբեր սկսեցին իրենց ներկայացումները բերել Ռումինիա:

Տարիներ առաջ՝ Նագոայի շեքսպիրյան ընկերության և Նագոայի թատերական համագումարի ժամանակ, ինձ հարց տվեցին, թե որն է Կրայովայի թատերական գործունեության հարատևման գաղտնիքը: Նրանք նույնիսկ տասներեք հարցումներ պատրաստեցին, որոնք դեռ այսօր էլ կարևոր են թվում: Փառատոնը արդեն իր տասներորդ տարեդարձն է նշել, իսկ նրա հաջողության գաղտնիքը մնում է տասնիններորդ դարի թատրոնի հանդիսատեսի մեջ, որ համառորեն մերժեց պրովինցիալ թատրոն ունենալու գաղափարը, որ պայմանավորված էր աշխարհագրական, տնտեսական և քաղաքական սահմանափակվածությամբ: Իմ զեկուցումը մեկնաբանում է քսան տարի առաջ Կրայովայի շեքսպիրյան փառատոնի ծնունդն ու հետագա զարգացումը:

Pr. Mika Eglinton
Kobe University of Foreign Studies
Japan

YUKIO NINAGAWA AS THE ICONIC JAPANESE SHAKESPEARE

Since his debut in Japanese commercial theatre with *Romeo and Juliet* in 1974, Yukio Ninagawa (1935–2016) aimed to popularize Shakespearean plays by revealing the vulgarity and subversive energy in the bard's text, as well as his poetic language and philosophical insight. Influenced by Mikhail Bakhtin's *Rabelais and His World*, he intended to bring the carnivalesque, grotesqueness and fecundity of Renaissance culture onto his stage. Following his first production abroad, *Medea* in Athens in 1983 (premiered in Tokyo in 1978), Ninagawa's *Macbeth* was invited to the Edinburgh Festival in 1985 (premiered in Tokyo in 1980).

Ninagawa carved out a unique directorial style from bold relocations and meta–theatrical frameworks, and an eclecticism in bridging the gap between European classic texts, Asian contexts and contemporary theatrical techniques and aesthetics. After the success of *Macbeth*, Ninagawa presented numerous 'Japanized' or 'Orientalized' stagings of Shakespeare in the UK, such as *The Tempest* in 1992, *King Lear* in 1999 and *Twelfth Night* in 2009, and is largely recognized as an icon of 'Japanese Shakespeare' met with both applause and criticism.

Whilst borrowing heavily from Japanese historical figures and traditional cultural forms, such as *samurai, butsudan* and *cherry blossom*, for their visual and symbolic significance, Ninagawa opposed the notion of exploiting so–called 'eastern exoticism' to attract western gazes, with the desire to relate to contemporary Japanese audiences, who live in a highly westernized modern society, yet remain rooted in a communal sense of Japanese tradition.

In this paper, I survey Ninagawa's adaptations of Shakespeare, with emphasis on *Macbeth*, to analyse the shifts in his use of exoticism against a backdrop of globalization. By mapping changes in his domestic and overseas approaches to exoticism, I will assess the role this strategy played in the popularization, but also criticism of more than 40 years of his work.

Միքա Էգլինթոն
Կոբեի համալսարան
Ճապոնիա

ՅՈՒԿԻՈ ՆԻՆԱԳԱՎԱՆ ՈՐՊԵՍ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՇԵՔՍՊԻՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Ճապոնական կոմերցիոն թատրոնում 1974 թ.՝ «Ռոմեո և Ջուլիետ» –ի պրեմիերայից հետո, Յուկիո Նինագավան (1935–2016 թթ.) նպատակադրվեց ժողովրդականացնելու Շեքսպիրի պիեսները՝ տեքստերում բացահայտելով գռեհկությունն ու հեղափոխիչ էներգիան, ինչպես նաև բանաստեղծական լեզուն և փիլիսոփայական խորաթափանցությունը: Միխայիլ Բախտինի «Ռաբլեն և նրա աշխարհը» աշխատությունից ազդված՝ նա ցանկանում էր բեմ բերել Վերածննդի մշակույթի կարնավալային, գրոտեսկային բեղունությունը: 1983 թվականին արտասահմանում՝ Աթենքում, իր առաջին բեմադրության հաջողությունից հետո («Մեդեա» ողբերգությունով, որ Տոկիոյում առաջին անգամ բեմադրվել էր 1978 թվին)՝ Նինագավայի «Մակբեթ»-ի բեմադրությունը հրավիրվեց մասնակցելու Էդինբուրգի փառատոնին 1985 թվին (Տոկիոյում առաջին անգամ բեմադրվել է 1980 թվին):

Նինագավան հանդուգն վերատեղադրումներից և թատերական շրջանակներից դուրս կերտեց յուրահատուկ բեմադրական ոճ, ինչպես նաև էկլեկտիզմ՝ մերձեցնելով եվրոպական դասական տեքստերը, ասիական համատեքստը և ժամանակակից թատերական հնարքներն ու գեղագիտությունը: «Մակբեթ»–ի հաջողությունից հետո Նինագավան Միացյալ Թագավորությունում ներկայացրեց Շեքսպիրի մի շարք «ճապոնականացված» կամ «օրիենտալացված» բեմադրություններ, ինչպես, օրինակ, «Փոթորիկ»–ը՝ 1992 թ., «Լիր արքա»–ն՝ 1992 թ., և «Տասներկուերորդ գիշեր»–ը՝ 2009 թ.: Նա համարվում է «Ճապոնական Շեքսպիրի» խորհրդանիշը, ում և՛ ծափահարել են, և՛ քննադատել:

Առատորեն փոխառնելով ճապոնական պատմական կերպարներից և ավանդական մշակութային ձևերից, որոնցից են, օրինակ, սամուրայը, բուցուդանը և ճապոնական բալենին, իրենց պատկերային և խորհրդանշական նշանակության համար, Նինագավան միաժամանակ դեմ էր այսպես կոչված «արևելյան էկզոտիկության» շահագործման միջոցով արևմտյան հայացքներ գրավելուն՝ ձգտելով հաղորդակցվելու ժամանակակից ճապոնացի հանդիսատեսի հետ, ով ապրում էր խիստ արևմտականացված արդի հասարակությունում, սակայն շարու-

նակում արմատացած մնալ ճապոնական ավանդույթի համայնական ապրելակերպի մեջ:

Այս զեկուցման մեջ ես անդրադառնում եմ Նինագավայի շեքսպիրյան վերամշակումներին՝ կենտրոնանալով «Մակբեթ»–ի վրա, վերլուծելու համաշխարհայնացման ժամանակներում նրա անձնական մոտեցումը: Ուրվավծելով էկզոտիկության նրա ներքին՝ ազգային, և արտաքին՝ միջազգային, մոտեցումների փոխհարաբերությունը, ես կգնահատեմ այս ստրատեգիայի դերը նրա Շեքսպիրի ժողովրդականացման ավելի քան 40 տարվա աշխատանքներում, ինչպես իր քննադատության մեջ:

Pr. Ara Arakelyan
Yerevan State University
Armenia

SHAKESPEARE AND THE GERMAN EIGHTEENTH CENTURY

We believe that from the point of view of studying the eighteenth century historic–cultural revolution in Germany, it is of primal importance to study the connections of Shakespeare's heritage. We will try to study those connections in the historical development in three stages. The present paper will analyse the stages of Shakespeare's influence on German literary movements which can be divided into three periods:

Shakespeare's works reached neighbouring France and Germany quite differently and rather slowly. Voltaire was the first to talk about Shakespeare in France in the 1730s, a little later, in Germany, Lessing and then also Christoph Wieland started to discuss publicly about Shakespeare's work and legacy. Lessing's *Emilia Galotti,* as well as other comedies, comprised the mark of Shakespearean aesthetics. Wieland made the first attempts to translate Shakespeare's works into German.

The second stage included the period of the famous Sturm und Drang movement. Herder, the leader of the movement, was a big admirer of Shakespearean art, and his reverence toward the great English writer passed down to almost all the members of the movement: Goethe, Schelling, Schiller and others. Explorations of the relationship between Goethe and Shakespeare became one of the most important fields in German studies. Goethe explored Shakespeare during his entire life and remains enthralled by him not only as a poet, writer, and playwright, but also as a theorist. In addition, the exploration of Shakespearean aesthetics and human nature was a very enlightening experience for Schiller, for example, the connections between *King Lear* and *The Virgin of Orleans*.

The interest towards Shakespeare's works expanded especially during the Romantic era, at the end of the eighteenth century and the beginning of the nineteenth century. Shakespeare has had a tremendous influence on the question of the importance of human beings and their relation to God, the question of good and evil as well as other inquiries, and on Romantic aesthetics in general. August Schlegel continued the tradition of translating Shakespeare's work. Kleist's dramaturgy is an interesting interpretation of the Shakespearean tradition. The relationship between Hegel and Shakespeare as well as between Schelling and Shakespeare also holds some scientific interest.

Արա Առաքելյան
Արևմտյան գրականության ամբիոնի վարիչ
Երևանի պետական համալսարան
Հայաստան

ՇԵՔՍՊԻՐԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ 18-ՐԴ ԴԱՐԸ

Կարծում ենք, որ գերմանական 18–րդ դարի պատմամշակութային հեղափոխության ուսումնասիրության տեսանկյունից առաջնահերթ խնդիր է Շեքսպիրի ժառանգության կապերի ուսումնասիրությունը: Մենք կփորձենք այդ կապերն ուսումնասիրել պատմական զարգացման մեջ երեք փուլով.

Շեքսպիրի ստեղծագործությունը Անգլիայից հարևան Ֆրանսիա և Գերմանիա է հասնում բավական դանդաղ: 18–րդ դարի 30–ական թթ. մեծ գրողի մասին Ֆրանսիայում առաջին անգամ սկսում է խոսել Վոլտերը: Գերմանիայում մի փոքր ավելի ուշ Շեքսպիրի մասին ելույթներով հանդես են գալիս նախ Լեսսինգը, իսկ հետո Քրիստոֆեր Վիլանդը: Լեսսինգի «Էմիլիա Գալոտտին» և առանձին կատակերգություններ իրենց վրա կրում են շեքսպիրյան գեղագիտության կնիքը: Վիլանդը առաջին փորձը ձեռնարկեց գերմաներենով թարգմանելու շեքսպիրյան ստեղծագործությունները:

Երկրորդ փուլն ընդգրկում է «Գրոհ և փոթորիկ» հանրահայտ շարժման ժամանակը: Շարժման առաջնորդ Հերդերը շեքս- պիրյան արվեստի մեծ երկրպագուն էր, որից էլ մեծ գրողի հանդեպ պատկառանքը անցնում է շարժման գրեթե բոլոր անդամ ներին՝ Գյոթեին, Շելլինգին և այլոց: Գյոթե–Շեքսպիր առնչությունների բացահայտումը գերմանագիտության կարևոր ուղղություններից է: Գյոթեն Շեքսպիրին հայտնագործում է ողջ կյանքում, մնում է նրանով հմայված ոչ միայն իբրև պոետ, արձակագիր, դրամատուրգ, այլև տեսաբան: Շեքսպիրյան գեղագիտական և մարդկային բնավորությունների բացահայտման փորձը չափազանց ուսանելի էր նաև Շիլլերի համար: «Լիր արքա» – «Օռլեանի կույսը» առնչությունները:

Շեքսպիրի ստեղծագործությունների հանդեպ հետաքրքրու- թյունը ընդլայնվեց հատկապես ռոմանտիզմի դարաշրջանում՝ 18–րդ դարի վերջին, 19–րդ դարի սկզբին: Պատմության մեջ մարդու նշանակության, նրա և Աստծո առնչությունների, բարու և չարի և բազմաթիվ այլ խնդիրների ու առհասարակ ռոմանտիկական գեղագիտության վրա մեծ է Շեքսպիրի ազդեցությունը: Ավգուստ Շլեգելը շարունակում է

շեքսպիրյան ստեղծագործությունների թարգմանության ավանդույթը: Շեքսպիրյան ավանդույթի հետաքրքիր մեկնաբանություն է Քլայստի դրամատուրգիան: Գիտական որոշակի հետաքրքրություններ է պարունակում նաև Շեքսպիր–Հեգել, Շեքսպիր–Շելլինգ առնչությունների բացահայտումը:

Pr. Karlen Matinyan
Slavonic University
Armenia

SHAKESPEARE AND THE TENDENCIES OF THE DEVELOPMENT OF GERMAN ENLIGHTENMENT THOUGHT

It is difficult to overestimate Shakespeare's impact on German Enlightenment. The German translations of the great playwright's works became revolutionary not only for Enlightenment thought but also for the cultural life of the country. Shakespeare's name is associated with the formation of a new literary language and aesthetic principles in Germany.

This process started with Christoph Martin Wieland's translations, which were, in fact, the renditions of Shakespeare's plays in prose, where Shakespeare's dramaturgical genius was interwoven with the Rococo aesthetic.

Herder and Lessing revealed the rational and sensible origin of Shakespeare's works. If Herder succeeded in exposing the multi–sidedness and colorfulness of Shakespeare's literary world, Lessing introduced Shakespeare from the perspective of the perspicacity and clarity of his thoughts.

Կարլեն Մատինյան
Սլավոնական համալսարան
Հայաստան

ՇԵՔՍՊԻՐԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Շեքսպիրի ազդեցությունը գերմանական լուսավորչության վրա դժվար է գերագնահատել: Մեծ դրամատուրգի գործերի գերմաներեն թարգմանությունները հեղափոխություն առաջացրին ինչպես լուսավորչական մտքի, այնպես էլ երկրի ողջ մշակութային կյանքի մեջ: Շեքսպիրի անվան հետ են կապում Գերմանիայում գեղարվեստական նոր լեզվի, ինչպես նաև գրական–գեղագիտական նոր սկզբունքների ձևավորման գործընթացը:

Այդ գործընթացի սկիզբը դրեցին Վիլանդի թարգմանությունները: Սրանք, թերևս, ավելի ճիշտ կլիներ անվանել Շեքսպիրի չափածո գրված պիեսների արձակ վերաշարադրում, ուր շեքսպիրյան դրամատուրգիայի հանճարը միահյուսված է ռոկոկոյի գեղագիտության հետ:

Հերդերի և Լեսսինգի շնորհիվ բացահայտվեց Շեքսպիրի ստեղծագործության ռացիոնալ, բանական սկիզբը: Եթե Հերդերին հաջողվեց լիովին ի հայտ բերել անգլիացի դրամատուրգի գեղար- վեստական աշխարհի բազմակողմանիությունը և գունային հագեց- վածությունը, ապա Լեսսինգի շնորհիվ Շեքսպիրը ներկայացավ գերմանացիներին իր մտքերի խորությամբ և հստակությամբ:

Pr. Henrik Edoyan
Yerevan State University
Armenia

SHAKESPEARE'S DIONYSIAN ART (TRAGEDY AS A MYSTERY)

As to Nietzsche there are two stylistic approaches in literature: *Apollonian* and *Dionysian* which are to explain the literary–artistic events. Studying the works of the two geniuses of the renaissance allegory, Dante and Shakespeare, we conclude that their approaches contradict each other. Dante's *Devine Comedy* is based on the Apollonian style and Shakespeare's tragedies are pure Dionysian. They are as dissimilar from each other as theatre–tragedy is from poem–epoch. The space created by Dante is static. It is in front of the human appreciation, whereas Shakespeare's space is in its way to perfection, therefore it is an unfinished and endless process. Shakespeare's world is constantly changing. There is no certainty around *Hamlet*. He needs to create it. Hamlet's symbol is not the "word" (words, words and words…) but the silence. 'Silence' is the culmination of the tragedy of *Hamlet*. Dante's imaginative principle does not work in Shakespeare's changeable, collapsing and rebuilding world. Between Ptolemy's closed space and Copernic's open space, just on the border, ends Hamlet's tragedy and the infinity of human conscience appears. *Hamlet* is a drama–mystery where man's sacrifice– crucifixion is to reach perfect reality, fuse with God, whereas God's crucifixion is to embody in a human being. Post-Shakespearean European drama henceforth is the drama of the collapse of the individual, of the human being, that culminates in the twentieth century literary, artistic and cultural movements.

Հենրիկ Էդոյան
Երևանի պետական համալսարան
Հայաստան

ՇԵՔՍՊԻՐԻ ԴԻՈՆԻՍՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ (ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ՄԻՍՏԵՐԻԱ)

Նիցշեական բնութագրմամբ գրականության մեջ գործում են երկու ոճեր՝ Ապոլոնյան և Դիոնիսյան, որով բացատրվում են գրական– գեղագիտական շատ իրողություններ: Այս տեսակետից վերցնելով Վե-

րածննդի շրջանի երկու մեծ հանճարների՝ Դանտե Ալիգիերիի և Ուիլյամ Շեքսպիրի գեղարվեստական համակարգերը. տեսնում ենք, որ նրանք ստեղծված են հակադիր սկզբունքներով. Դանտեի «Աստվածային կատակերգությունը» հիմնված է Ապոլոնյան, իսկ Շեքսպիրի ողբերգությունները՝ Դիոնիսյան հիմքերի վրա: Շեքսպիրի Դիոնիսյան արվեստը հակադիր է Դանտեի Ապոլլոնյան արվեստին, ինչպես թատրոն–ողբերգությունը՝ պոեմ–էպոսին: Դանտեի ստեղծած Կոսմոսն ունի ստատիկ բնույթ, այն պատրաստի դրված է մարդու աչքերի առջև՝ որպես անփոփոխ, կատարյալ, վերջնականապես ձևավորված, որպես ավարտված Արարչագործություն, իսկ Շեքսպիրի Կոսմոսը գտնվում է կայացման, լինելիության, կառուցման անվերջ և անավարտ պրոցեսում:

Շեքսպիրի ողբերգության մեջ չկա անշարժ և ստատիկ աշխարհ, այն միշտ գտնվում է վերակառուցման մեջ: Օրինակ՝ Համլետի շուրջը չկա պատրաստի իրականություն, նա ինքն է ստեղծում այն, որի նշանը ոչ թե բառն է («բառեր, բառեր, բառեր...» արտահայտությունը ցույց է տալիս Համլետի անվստահությունը բառե- րի նկատմամբ), այլ լռությունը, որը ողբերգության բարձրակետն է, նրա իմաստաբանական կենտրոնը կամ Համլետյան «գաղտնիքը»: Դանտեական իմագինատիվ սկզբունքը չի կարող գործել Շեքսպիրի ինսպիրատիվ, փոփոխվող, կառուցվող ու փլվող աշխարհում, նրա հիմքը մարդու ներքին գիտակցությունն է: Շեքսպիրի պիեսի մեջ («Համլետ») աշխարհի կառուցումն ու փլուզումը ուղիղ համեմատական են նրա ներքին գիտակցության զարգացմանը և դինամիկային: Պտղոմեոսյան փակ Տիեզերքի և Կոպեռնիկոսյան բաց Տիեզերքի սահմանին տեղի է ունենում համլետյան ողբերգության կատարսիսը՝ անվերջության և անսահմանության հայտնությունը մարդկային գիտակցության մեջ: Կարելի է ասել, որ «Համլետը» դրամա-միստերիա է, ուր տեղի է ունենում մարդ-անհատի Գողգոթան, նրա զոհաբերություն–խաչելությունը՝ ավելի բարձր աշխարհ (ավելի կատարյալ իրականություն) մտնելու ներքին միտումով: Ավետարանական Գողգոթան (Աստծո խաչելությունը, որի նպա տակը Աստծո մարմնավորումն է մարդու մեջ) Շեքսպիրի դրամա–միստերիայում վերածվում է մարդու գողգոթային (մարդու մարմ նա վորումը Աստծո մեջ): Հետշեքսպիրյան եվրոպական դրաման (ըստ էության՝ ողջ եվրոպական գրականությունը), աշխարհում մարդու քայքայման և մասնատման ընթացքն է, նրա անհետացումը, որը ինչ–որ չափով ավարտվում է 20–րդ դարի արվեստի, գրականության և ընդհանուր մշակույթի մեջ:

Dr. Katherine Hennessey
University of Warwick and Queen Mary University of London
United Kingdom

'HELL IS EMPTY AND ALL THE DEVILS ARE HERE': CONTEMPORARY TRANSLATIONS AND ADAPTATIONS OF SHAKESPEARE IN IRELAND AND THE MIDDLE EAST

Whether the focus is on tempests and sea–changes or rebellions and revolutions, on the taming of unruly social agents or their tragic end, Shakespeare's plays speak to societies in the throes of transformation. Perhaps this helps to explain why over the past decade Shakespeare has flourished on stage in places like Ireland, Palestine, and the Arabian Peninsula, in productions that are highly innovative not only in terms of language, casting and set design but also in terms of their reflections upon contemporary socio–political issues around the globe.

Representative productions to be considered include:

Lynne Parker's 2006 *Taming of the Shrew*, set in rural Ireland in the 1970s. The performance provided caustic commentary on the oppressive, patriarchal nature of a money–grubbing society in which marriage is reduced to a tool for ensuring the transfer of property, with clear parallels to the crasser and more materialistic aspects of the transformation of Irish society by the 'Celtic Tiger' economic boom.

the Arabic–language production of *Richard II* at Shakespeare's Globe Theatre in 2012. Performed by the Palestinian troupe Ashtar and directed by Irish playwright and director Conall Morrison, this play was—perhaps inevitably—interpreted as a commentary on the prior year's 'Arab Spring' protests.

the Doha Players' 2015 production of *Macbeth* in Qatar. Staged in March on the ten–year anniversary of the suicide bombing of a 2005 production of *Twelfth Night* at the Players' theatre, the violence of the Scottish play carried contemporary resonance despite the production's deliberate avoidance of Qatari or other localized cultural references.

This paper will consider the strategies of linguistic and cultural translation and transformation adopted by these playwrights and theatre practitioners to render Shakespeare's plays comprehensible, relevant and urgent to contemporary audiences.

Քեթրին Հենեսի
Լոնդոնի Քուին Մերի և Ուորվիքի համալսարաններ
Մեծ Բրիտանիա

«ԴԱՏԱՐԿ Է ԴԺՈԽՔԸ, ԵՎ ԱՅՍՏԵՂ ԵՆ ՉԱՐՔԵՐԸ ԲՈԼՈՐ». ՇԵՔՍՊԻՐԻ ԱՐԴԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՌԼԱՆԴԻԱՅՈՒՄ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Հենակետը լինի փոթորիկների ու ահռելի փոփոխությունների, ապստամբությունների ու հեղափոխությունների, անհնազանդ հա- սա- րակական գործիչներին տապալելը կամ էլ թե նրանց ողբերգական վերջը՝ Շեքսպիրի պիեսները արտացոլում են հասարակության պոռթկուն իրավիճակները: Սա գուցե նպաստում է բացատրելու, թե վերջին տասնամյակի ընթացքում Շեքսպիրն ինչու է բեմադրվել այնպիսի վայրերում, ինչպիսիք են Իռլանդիան, Պաղեստինը և Արաբական թերակղզին, և այնպիսի բեմադրություններ, որոնք չափազանց նորարարական էին ոչ միայն լեզվական, դերասանական ու բեմական լուծումներով, այլ նաև աշխարհում ներկայիս սոցիալ–քաղաքական խնդիրներին անդրադառնալու առումով: Քննարկվող այդպիսի բեմադրությունները հետևյալն են.

Լին Փարքերի 2006 թվականի «Անսանձ կնոջ սանձահարումը»՝ տեղակայված գյուղական Իռլանդիայում 1970–ականներին: Ներկայացումը սուր մեկնաբանություն էր՝ ուղղված փողի ետևից ընկած հասարակության ճնշող ու հայրիշխանական տարրերի դեմ, որտեղ ամուսնությունն արժեզրկված է որպես լոկ ունեցվածքի փոխադրման գործիք՝ հստակ զուգահեռներ ունենալով «Կելտական վագր» կոչվող տնտեսական վերելքի՝ իռլանդական հասարակության վրա ունեցած փոփոխության ավելի մռայլ ազդեցության ու ավելի նյութապաշտական կողմի հետ:

Շեքսպիրի Գլոբուս թատրոնում «Ռիչարդ II»–ի արաբալեզու բեմադրությունը 2012 թվականին: Պաղեստինյան Աշթար թա- տերախմբի ներկայացմամբ և իռլանդացի դրամատուրգ և բեմադրիչ Քոնալ Մորիսոնի բեմադրությամբ այս ներկայացումը, թերևս անխուսափելիորեն, ընկալվեց իբրև նախորդ տարվա «Արաբական գարուն» հեղաշրջումների մեկնաբանություն:

2015 թվականի Դոհա Փլեյերս թատրոնում «Մակբեթ»-ի բեմադրությունը Քաթարում: Բեմադրված մարտ ամսին՝ ներկայացումը հա-

մընկել էր Փլեյերսի թատրոնում 2005 թվականին «Տասներկուերորդ գիշեր»–ի բեմադրության ժամանակ դահլիճում կատարված պայթյունինքնասպանության տասներորդ տարելիցին: Շեքսպիրի շոտլանդական ողբերգության դաժանությունն ունեցավ ժամանակակից ռեզոնանս՝ չնայած բեմադրության դիտավորյալ խուսափել էր քաթարական կամ այլ տեղայնացված ակնարկներից:

Այս ելույթը կքննարկի թարգմանությունների լեզվաբանական ու մշակութային ընտրությունները և վերոհիշյալ ներկայացումների որդեգրած փոխակերպությունները՝ ժամանակակից հանդիսատեսին Շեքսպիրի պիեսները առավել հասկանալի, արդիական և ակտուալ դարձնելու միտումով :

Dr. Nicoleta Cinpoeş
University of Worcester
United Kingdom

'WHO'S THERE?': *HAMLET* AND POST–1989 ROMANIA

Hamlet has been *the* Shakespeare play that has enabled Romania to ask 'Who's there?' (1.1.1) at crucial moments in its history. For over two hundred and twenty years, Romanian productions, translations and critical appropriations of the play have been Romania's way of thinking through its historical moments. The aim of my presentation is two–fold: while it traces the intertwined story of *Hamlet* and Romania by discussing stage productions of *Hamlet* in Romania during the first decade of the third millennium, it also enquires why *Hamlet* has *not* been happening on Romanian stages since 2009, and begins to pose questions as to why this is the current state of affairs.

Նիքոլետա Սինփոես
Վորսթերի համալսարան
Մեծ Բրիտանիա

«Ո՞Վ ԿԱ ԱՅՍՏԵՂ» – ՀԱՄԼԵՏԸ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՆ 1989 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ

Համլետը Շեքսպիրի այն ողբերգությունն է, որ կարողանում է այս հարցը ուղղել Ռումինիային՝ իր պատմության վճռական պահերին: Համարյա երկու հարյուր քսան տարիների ընթացքում ողբերգության ռումինական բեմադրությունները, թարգմանությունները և քննադատական սահմանումները ամփոփել են Ռումինիայի խոհերն ինքն իր մասին պատմական շրջադարձային պահերին:

Այս զեկուցումը երկու նպատակ ունի. մինչ այն բնութագրում է Համլետի և Ռումինիայի միահյուսված պատմությունը երրորդ հազարամյակում, այն նաև մեկնաբանում է, թե ինչու Համլետը Ռումինիայում չի կայացել 2009 թվականից այս կողմ, և հարց է ծագում երկրի ներկա իրավիճակի մասին:

CONTENTS

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Welcome from ASA 3
ZABEL BOYAJIAN, *To Shakespeare (1916)* 5
JASMINE SEYMOUR, *Shakespearean Celebrations In The Armenian Reality Since 1864* 6
TOM SAMUELIAN, *Narek & Shakespeare: Messengers Of Reawakening* 11
Programme of the Conference 14
JASON BURG, *Imposed Meanings: Shakespearean Performance In The Cathedral Context* 19
ՋԵՅՍՈՆ ԲՈՒՐԳ՝ *Հարկադրող իմաստներ՝ շեքսպիրյան ներկայացումը տաճարների տարածքում* 20
MUFEED F. AL-ABDULLAH, *Shakespeare's Archetypal Pattern Of Social Change In Saroyan's* ***The Time Of Your Life*** 22
ՄՈՒՖԻԴ Ֆ. ԱԼ-ԱԲԴՈՒԼԱՀ՝ *Հասարակական շրջադարձի շեքսպիրյան նախատիպը Սարոյանի «Քո կյանքի ժամանակը» պիեսում* 24
PAROMITA CHAKRAVARTI, *Beyond Bollywood: Shakespeare In Bengali Regional And Diasporic Cinema* 27
ՓԱՐՈՄԻԹԱ ՉԱՔՐԱՎԱՐԹԻ՝ *Բոլիվուդից դուրս՝ Շեքսպիրը Բենգալի և հնդկական սփյուռքի ֆիլմերում* 28
NAIRA SHAHVALADYAN, *The Stage Appearance Of Shakespeare's Hamlet* . . . 30
ՆԱԻՐԱ ՇԱՀՎԱԼԱԴՅԱՆ՝ *Շեքսպիրի Համլետի բեմական արտաքինը* . . . 31
SONA SEFERIAN, JASMINE HASMIK SEYMOUR, *The Role Of Shakespearean Translations In The Revival Of The Cultural And Armenian National Identity (1820–1923)* 33
ՍՈՆԱ ՍԵՖԵՐՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ՍԵՅՄՈՐ՝ *Շեքսպիրյան թարգմանությունների դերը հայ մշակութային և ազգային ինքնագիտակցության զարթոնքի մեջ (1820–1923)* 34
KARO VARDANYAN, *Shakespearean Translations By Dashtents* 36
ԿԱՐՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ *Դաշտենցի շեքսպիրյան թարգմանությունները* . . . 37

NATALYA GONCHAR-KHANJYAN: НАТАЛИЯ ГОНЧАР–ХАНДЖЯН,
The Early Russian Translations Of Hamlet (In Russian):
О первых русских переводах трагедии Шекспира «Гамлет» 40
RUZANNA GARGALOYAN, *Translating Puns In ROMEO AND JULIET* 42
VAHE ARSENYAN, *The Idea Of Physical Love In D.H. Lawrence's*
LADY CHATTERLEY'S LOVER *And W. Shakespeare's Romeo And Juliet* . . . 43
ՎԱՀԵ ԱՐՍԵՆՅԱՆ*: Մարմնական սիրո թեման Դ. Հ. Լորենսի*
«Լեդի Չաթըրլիի սիրեկանը» և Վ. Շեքսպիրի
«Ռոմեո և Ջուլիետ» ստեղծագործություններում 43
CHARLES FAIRBANKS, *Shakespeare On The Coming*
Of The Renaissance 45
ՉԱՐԼԶ ՖԵՐԲԵՆՔՍ: *Շեքսպիրը՝ գալիք վերածննդի մասին* 46
ANNA KHACHATRYAN, *Teaching Shakespeare As A Means Of Shaping*
An Individual's Worldview 49
ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ: *Շեքսպիրի դասավանդումը որպես անհատի*
աշխարհայացքի ձևավորման միջոց 49
ANUSH SEDRAKYAN, *Interpretation Of Legal And Ethical Norms*
In Shakespeare's Plays 51
KANG KIM, *Graphic Shakespeare In Korea: An Educational Toolbox* 52
ՔԱՆԳ ՔԻՄ: *Գրաֆիկական Շեքսպիրը Կորեայում՝*
որպես կրթական գործիք 53
XENIA GEORGOPOULOU, *"Shakespeare And The Politics*
Of Modern Greece" 54
ՔՍԵՆԻԱ ՋՈՐՋՈՊՈՒԼՈՒ: *Շեքսպիրն ու արդի Հունաստանի*
քաղաքականությունը 55
ZORICA BEČANOVIĆ NIKOLIĆ, *Shakespeare In Serbia:*
Trans–Cultural Appropriations 57
ԶՈՐԻՑԱ ԲԵԿԱՆՈՎԻՉ ՆԻԿՈԼԻՉ: *Շեքսպիրը Սերբիայում՝*
միջազգային յուրացումներ 58
BAKHTIAR HOVAKIMYAN, *Shakespeare In Armenian Theatre* 59
ԲԱԽՏԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ: *Շեքսպիրը հայ թատրոնում* 60
EMIL SÎRBULESCU, *Stances Of Endurance: How A Provincial Theatre Turned*
Global – The Craiova International Shakespeare Festival 61
ԷՄԻԼ ՍԻՐԲԵԼԵՍԿՈՒ: *Հարատևության գաղտնիքները.*
թե ինչպես մի պրովինցիալ թատրոն դարձավ
համաշխարհային շեքսպիրյան փառատոն 62

MIKA EGLINTON, *Yukio Ninagawa As The Iconic Japanese Shakespeare* *64*
ՄԻՔԱ ԷԳԼԻՆԹՈՆ: *Յուկիո Նինագավան որպես ճապոնական Շեքսպիրի խորհրդանիշ* *65*
ARA ARAKELYAN, *Shakespeare And The German Eighteenth Century* *67*
ԱՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ: *Շեքսպիրը և գերմանական 18-րդ դարը* *68*
KARLEN MATINYAN, *Shakespeare And The Tendencies Of The Development Of German Enlightenment Thought* *70*
ԿԱՐԼԵՆ ՄԱՏԻՆՅԱՆ: *Շեքսպիրը և գերմանական լուսավորչական մտքի զարգացման միտումները* *70*
HENRIK EDOYAN, *Shakespeare's Dionysian Art (Tragedy As A Mystery)* *72*
ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ: *Շեքսպիրի դիոնիսյան արվեստը (ողբերգությունը իբրև միստերիա)* *72*
KATHERINE HENNESSEY: *'Hell Is Empty And All The Devils Are Here': Contemporary Translations And Adaptations Of Shakespeare In Ireland And The Middle East* *74*
ՔԵԹՐԻՆ ՀԵՆՆԵՍԻ: *«Դափարկ է դժոխքը, և այստեղ են չարքերը բոլոր». Շեքսպիրի արդի թարգմանությունները և բեմադրությունները Իռլանդիայում և Միջին արևելքում* *75*
NICOLETA CINPOEŞ, *'Who's There?': Hamlet And Post–1989 Romania* *77*
ՆԻՔՈԼԵՏԱ ՍԻՆՓՈԵՍ: *«Ո՞վ կա այստեղ» – Համլետը և Ռումինիան 1989 թվականից հետո* *77*